

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԸՆՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԷ

ՏՓԵՏՐՎԱՐ 1880



Կ. ՊՕԼՈՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

11 Գոյմ-Գաբու, Պատրիարքարանի փողոց 11

ՄԱՍԻ ԴՐԻՆՆԵՐ

Ստեփան փայա Ասլանեան	Ա. Արեւադէպ
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւադէպ
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Չեռնասուրեան դիւան

Ճարտարարեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէ,  
Հովհաննէս Քահանա Մկրեան  
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան Արեւադէպ  
Բարսեղ էֆէնտի Հալաճեան  
Պողոս էֆէնտի Պառնասեան

Գուստիսկուրեան դիւան

Իրաւասուրեան դիւան

Մերփիչէն էֆէնտի Արեւադէպ  
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան  
Գասպար էֆէնտի Չէրազ

Ներսէս վարդապետ Ասլանեան  
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի Արեւադէպ  
Նշան էֆէնտի Օսեան

Կարուածոց դիւան

Նոխայանուրեան դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան  
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան  
Արիկ էֆէնտի Ունճեան Արեւադէպ

Տորթոս Ռափաէլեան էֆէնտի  
Յ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի Արեւադէպ  
Միհրան էֆէնտի Չօպանեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան  
Քրիստոսաուր էֆ. Ղազարոսեան Արեւադէպ  
Համբարձում էֆէնտի Մազսուրեան

Կարապետ էֆ. Խլթիւնեան Արեւադէպ  
Գարեգին էֆէնտի Մելիքեան  
Համբարձում էֆէնտի Այաճաճեան

Երևանի յանձնարարութիւն

Քրիստոսաուր էֆէնտի Ղազարոսեան  
Ղազար էֆէնտի Հովուեան

Սարգիս էֆէնտի Գալուքճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի. — Վիճարանութիւն ի վերայ Իրաւասութեան դիւանի տեղեկագրոյն :
- Բ. Առաջարկութիւն վարչութեան յաւելածական վարկի մասին : — Վիճարանութիւն ի վերայ Համարակալութեան դիւանի տեղեկագրոյն :
- Գ. Խնդիր Խորքերդի Երեսփոխանական ընտրութեան. — Վիճարանութիւն ի վերայ Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրոյն :
- Դ. Տեղեկագիր Մայր դիւանի ի վերայ 57 անլոյծ խնդրոյ :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵ

Ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր եւ Ատեւնապետութեամբ Տ. Մէրեէմ-Գուլի էֆէնտի տեսնելու բացուեցաւ ժամը 8<sup>1</sup>/<sub>2</sub> ին, ի ներկայութեան 38 Երեսփոխանաց, որոց թիւն 54 ի յանդեցաւ ի վերջէ :

Նախընթաց ժ. եւ ժ. 2. նիստերու ատենագրութիւններն Մայր դիւանին կողմէ վերջին անգամ տրուած խոստման համաձայն տպագրուած եւ ժամանակին ցրուած են, ժողովին դիտողութեանն ենթարկեց նախ ժ. նիստի ատենագրութիւնն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. Երես 377. սիւնակ Բ. արձանագրուած կը տեսնենք Տիգրանակերտի խնդրոյն նկատմամբ Մէրեէմ-գուլի էֆէնտի առաջարկն, որ էր՝ յանձնարարել վարչութեան որ Տիգրանակերտի դաւառին շահուց համաձայն տնօրինէ դարձանն :

Սոյն առաջարկը քուէի դրուելով ընդունուած է ժողովն. սակայն քուէարկութեան

Վաւերացումն ժ. եւ ժ. 2. նիստերու ատենագրութեանց :

Ատենապետ էֆէնտին յայտարարելով թէ՛

արդիւնքն առաջարկին բանաձեւէն զտքը ինչ տարբերութեամբ արձանագրուած է : այսինքն փոխանակ զաւատին շահուց համաձայն քսուելու , ինչպէս էր առաջտրկը , տեղւոյն ժողովրդեան շահուց համաձայն բառերը նըշանակուած են : Այս բացատրութեանց դանազանութենէն իմաստի տարբերութիւն մը յառաջ կու գայ . ուստի շիտոզութեան տեղի չտալու համար՝ պէտք է առաջին բացատրութիւնն ընդունել իբր ճիշդ՝ երկրորդին տեղ

Ուրիշ զիտոզութիւն տեղի չունենար , հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ ժ.Ն. նստի ատենագրութիւնն , եւ ժողովը միաձայն՝ եղած զիտոզութեամբ հանդերձ ընդունելով՝ կը վաւերի զայն :

Յետոյ Ատենապետ էֆէնտին ՚ի զիտոզութիւն կը հրաւիրէ զերեսփոխան ժ.Չ. նիտտի ատենագրութեան վրայ :

ՄԷԶՊՈՒՐԵԱՆ Ն. ԷՖ.— Այդ ատենագրութիւնը դեռ հիմա առինք , ուստի կառաջարկեմ յառաջիկայ նիտտին վերապահել վաւերացումն :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ.— Թէեւ ես ալ երկու ատենագրութիւն միանգամայն՝ այսօր ատենան չունեցայ , սակայն ստուգած եմ որ մինքանի մ'օր առաջ եւ միւսն՝ երէկ կէս օրին ցրուած եւ հասած է Երեսփոխանաց ձեռքն . ուստի չեմ կարծեր որ բացառութեանց համար ժողովը հաւանի ձեր յետաձգման առաջարկն ընդունիլ :

ՉԱՅՆԵՐ ԱՄԵՆՈՒՍՏ.— Այո , այո : ստացանք ժամանակին :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն ՚ի զիտոզութիւն կը հրաւիրեմ զձեզ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Երես 393. սիւնակ Ա. իմ մէկ խօսքս մոռցուած է արձագագրուե-

լու : Երբ Մէզպուրեան էֆէնտին իւր ատենախօսութիւնը վերջացնելով՝ ժ.Ն. նիտտի ատենագրութեան վրայ զիտոզութիւն ունենալը կը յայտարարէր . ըսի թէ՝ « Ես ալ զիտոզութիւն ունեի , բայց չկրցի ժամանակին հասնիլ : որ կարենայի զիտոզութիւնս ընել , սակայն իրաւունք չունիմ աւելի խօսելու , այլ այսքան միայն կը յայտարարեմ եւ կանցնիմ : » Ահաւասիկ այս խօսքը կը պակսի նոյն երեսին մէջ :

ՊԷՇԻՐԵԱՆ Ա. ԷՖ.— Երեսփոխանաց ցանկին մէջ իմ անուանս առջեւ 314 բացակայութիւն նշանակուած է : կարծեմ սպաղրական վրիպակ մ'է այս , որ ինձ վերադրած է Մեղիբեան Եղիազար էֆէնտի անուան առջեւ նշանակելի բացակայութիւնն :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ.— Այո , ճիշդ այդպէս եղած է , սպաղրական վրիպակ մը ստղղելով ցանկին մէջ :

Ուրիշ զիտոզութիւն տեղի չունենար հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կենթարկէ ժ.Չ. նիտտի ատենագրութիւնն . եւ ժողովը միաձայն՝ եղած զիտոզութեամբ հանդերձ՝ ընդունելով կը վաւերի զայն :

2.

Բացակայութիւն Երեսփոխանաց Երեսփոխաններէն՝

Տրդատ էֆէնտի ֆախաղեան՝

զրով ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ հարկադրեալ է այսօրեայ նիստէն բացակայ մնալ , Ատենապետ էֆէնտին անոր անունը կը յիշատակէ եւ բացակայութիւնն իբր օրինաւոր՝ արձանագրել կուտայ ներկայութեան սոււմարին մէջ :

3

Հրաժարական

Իրաւասութեան դիւանի անդամ Օտեան Նշան էֆէնտի կողմէ՝ մատուցեալ յետագայ հրաժարագիրը կարդացուեցաւ :

Մեծապատիւ Ատենապետ էֆէնտի Ազգ. Ժողովոյ

Ազգային պատկառելի ժողովոյ իրաւասութեան դիւանին անդամակցութեան կը հրաժարիմ , վասն զի Իրաւասութեան դիւանին՝ Տիգրանակերտի դադարեալ առաջնորդին խնդրոյն նըկատմամբ նախընթաց նիտտին առ պատկառելի ժողովս մատուցած տեղեկագրին առանց խորհրդակցութեան յօրինուած է , որուն երբէք պատասխանատու չեմ ,

Ազգ. Երեսփոխան Ն. Օտեան

8/20 Փետր. 1880

(Յետ ընթերցման)

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչպէս կը տեսնէք Օտեան Նշան էֆէնտին կը հրաժարի Իրաւասութեան դիւանի անդամակցութենէն , բայց ըստ որում իւր հրաժարականը պատճառաբանեալ է , ըստ օրինի հարկ կըլլայ նախաքննութեան յղել զայն :

Դիտոզութիւն ունի՞ք արդեօք այս մասին :

ՓԱՓԱՎԱԶԵԱՆ Մ. ԷՖ.— Ամենէն առաջ զիտոզութեան արժանի կէտը սա է որ Օտեան էֆէնտի պատճառաբանեալ հրաժարականը

խնդրոյ ներքեւ կը թողու Իրաւասութեան դիւանին կողմէ՝ եկած տեղեկագիրը , հետեւաբար չեմ կարծեր որ ժողովը կարենայ այլ եւս այդ տեղեկագիրն իբր պաշտօնական նկատել եւ անոր վրայ հիմնել խնդրոյն վիճաբանութիւնը :

ԷՆՔԱՆՆԵԱՆ Տ. ԷՖ.— Այդ հրաժարանը տեսակ մը բողոք է Օտեան էֆէնտի կողմէ՝ իւր անդամակցաց դէմ , որ առանց իրեն հետ խորհրդակցելու տեղեկագիրը յօրիներ եւ ներկայեր են ժողովս : Ուստի պէտք է լսենք Օտեան էֆէնտին , եթէ կը հաճի մանրամասն բացատրութիւն տալ մեզ եղելութեան վրայ :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ.— Եթէ Նշան էֆէնտի Օտեան հարկ կը տեսնէ իւր հրաժարականին պատճառաւ աւելի ընդարձակ կերպիւ բացատրել , կը հրաւիրեմ զինքը խօսք առնուլ :

ՕՏԵԱՆ Ն. ԷՖ.— Եթէ ժողովը հարկ կը դատի , պատրաստ եմ բացատրութիւն տալու , թէ եւ արդէն հրաժարագիրս մէջ համառօտած եմ հարկ եղած բացատրութիւնը :

ՓԱՓԱՎԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Երբ այս խնդրոյն վրայ ժողովը բացատրութիւն ստանալու պէտք ունենայ , կարծեմ թէ այդ բացատրութիւնն աւելի Իրաւասութեան դիւանի միւս անդամներէն պէտք է պահանջել . վասն զի Նշան էֆէնտին իւր հրաժարագիրն մէջ՝ բացարձակօրէն յայտարարած է արդէն թէ Տիգրանակերտի դադարեալ առաջնորդի խնդրոյն վրայ եկած տեղեկագիրն առանց իւր խորհրդակցութեան շինուած է , եւ թէ այս պատճառաւ կը հրաժարի : Ուստի հարկ կըլլայ իւր անդամակցաց հարցնել եւ բացատրութիւն խնդրել , թէ ինչպէս եղեր է , որ Նշան էֆէնտին իրենց քննութեանց՝ եւ խորհրդակցութեանց մասնակից չէ գտնուեր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Քանի որ Իրաւասութեան դիւանի ատենապետն , որ տեղե-

կազմին ստորագրած է. ներկայ չէ, որ պէտք եղած բացատրութիւնն առնուի իրմէ, հարկ կըլլայ այդ հրաժարականը նախաքննութեան զեղ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը տեսնէք որ այս վիճակին մէջ կարելի չէ ելք տալ խնդրոյն, առանց զայն նախաքննութեան յղելու, որ պիտի լուսաւորէ եղելութիւնն, եւ վիճաբանութեան հիմ մը ցոյց տայ մեզ: Ուստի, եթէ կը հասնիք, գործնական ճամբով կը յղենք Օտեան Նշան էֆէնտի հրաժարականը նախաքննութեան, եւ այս կերպով կը վերջացնենք խնդիրն, սպասելով գալիք տեղեկագրոյն:

ԶԱՅՆԵՐ.— Շատ աղէկ:

Ժողովը ԿՈՐՈՇԷ յղել խնդիրն Նախաձեռնութեան զիւանդին՝ ի նախաքննութիւն:

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Այս առթիւ կառավարկեմ որ այսուհետեւ երբ յատենի ժողովոյն որ եւ է տեղեկագիր կարգացուի, ստորագրողաց անունները յիշուին, որպէս զի ժողովը տեսնէ թէ ներկայացեալ տեղեկագիրն որո՞ւ պատասխանատուութեան ներքեւ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ձեմ կարծեր որ այս մասին յատուկ կանոն մը սահմանելու հարկ չիւնի, բնական է արդէն որ երբ ժողովին որ եւ է գրութիւն ներկայանայ, ամենէն առաջ պէտք կըլլայ տեղեկանալ թէ որու լիզումէ եկած է, ուստի ստորագրութիւններն չէ կարելի անյիշատակ թողուլ, երբ գրութեանց ընթերցումը տեղի ունենայ, ինչպէս որ Գիւաննալ մինչեւ ցարդ տարբեր կերպով շարժած չէ սցսպիտի սլարագայից մէջ:

4.

Երեսփոխանական նորոգ ընտրութիւնք

Եւզոպիոյ եւ Եզիպտոսի վիճակաց մէջ Երեսփոխանական նոր ընտրութիւն կատարուած

եւ արդիւնքը Գաղ. ժողովոյ կողմէ ծանօթարով հաղորդուած էր Ազգ. ժողովոյ:  
Ատենապետ էֆէնտին սոյն կրկին ընտրութեանց վերաբերեալ գրութիւնները մի առ մի ներկայեց ժողովին, որ ահաւասիկ,

Ծանօրագիր Գաղ. ժողովոյ

Վոլեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ

Եւզոպիոյ գաւառին ազգային Երեսփոխանի ընտրութիւնը կատարուած և տեղեկագիրը հասած է, որմէ կը հասկցուի որ նոյն գաւառին համար Երեսփոխան ընտրուած է

Յովակիմ էֆէնտի Յովակիմեան

Նոյնպէս Եզիպտոսի Գաւառական ժողովն իւր Երեսփոխանին ընտրութիւնը կատարած և տեղեկագիրը զրկած է, որմէ կիմացուի որ

Արբահամ էֆէնտի Մուրատեան

Երեսփոխան ընտրուած է:

Գաղ. ժողովս սոյն ընտրելոց սահմանադրական հանգամանաց վրայ պէտք եղած քննութիւնն ընելով Սահմանադրութեան համաձայն գտաւ: Ուստի յիշեալ երկու տեղեկագրերն ընդ ծանօթագրոյս կը մատուցանէ Ազգային ժողովոյդ՝ ի պարտաւ պատշաճ տնօրէնութիւն, ներփակելով միայն Մուրատեան էֆէնտի յանձնառութեան գիրն. իսկ Յովակիմեան էֆէնտի Պօլսէն բացակայ գտնուելուն պատճառաւ՝ անոր յանձնառութիւնը չէ կրցած ստուգուիլ:

Մնամք յարգանքօք

՚ի Դիմաց Վարչ. Գաղ. ժողովոյ

Վ. Ատենապետի Վ. Ատենապետի

Մ. Գ. Միսեկետիսեան Գեորգ Գըլճճեան  
7 Փետր, 1880

Տեղեկագիր Գաւառական ժողովոյ Եւզոպիոյ

Տեղեկագիր Գաւառական ժողովոյ Եզիպտոսի

Ամենապատիւ Արբաղան Հայր

Ամենապատիւ Արբաղան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգային Ընդհանուր ժողովոյ:

Ձեր Բարձր Արբաղութենէն եկած 358 թուահամար և Յունիս 2 ամսաթիւ վերջին հրահանգին համեմատ՝ տեղւոյս Գաւառական ժողովը հոկտեմբեր 3 ին, իւր 13րդ. նիստին մէջ Երեսփոխանի ընտրութիւնը կատարեց:

Քուէարկու Երեսփոխանաց թիւն էր 13:

Քուէհամարի արդիւնքն ելաւ հետեւեալ 3 ընտրելեաց վերայ, այսպէս,

Յովակիմ էֆ. Յովակիմեան 12 քուէ  
Տիգրան » Առաքելեան 2 »  
Եղիա » Տէմիրճիպաշեան 0 »

Հետեւապէս Գաւառական ժողովս քուէից բացարձակ առաւելութեամբ Յովակիմ Յովակիմեան էֆէնտին Մայրաքաղաքից Երեսփոխանական ժողովոյ անգամ ընտրելով, կը խնդրէ Ձեր Բարձր Արբաղութենէն սոյն նուիրական պաշտօնին կոչել յիշեալ էֆէնտին:

Մնամ Ձեր Բարձր Արբաղութեան անձնուէր սրաշտօնեաց

Յակոբոս Եպիս. Եւզոպիոյ

Դիւան Գաւառական ժողովոյ

Ատենապետի Փոխ Ատենապետ Կ. Ոսկան Ալբանեան Պօղոս Արքատեան

1879 Նոյ. 15 Եւզոպիա

Մնամք խոնարհ ծառայք

Անդամք Գաւառ Ժողովոյ Եղիպտոսի

Ատենադպիր Ա.Վ. Ատենապետ

Գ. Մ. Չալեան Զեկոք Նարկիլիճեան

Տ. Կարապետ Քանանայ Տ. Յակոբ Քանանայ  
Գաբրիել Գրիգորեան Եւստոֆ Հիւսնի  
Յովսէփ Հօթեաուճի Հ. Շէրիպեան  
Հայրապետ Գրիգորեան Գեորգ Յակոբեան  
Յովնանեա Պաղտասարեան

Յանձնառագիրը ընտրելոյն Եղիպտոսի

Բարձրաշնորհ Սրբազան Տէր

Ձեր Բարձր Սրբազնութիւնը մի պատուական նամակաւ պատիւ ըրած էր ծանուցանել ինձ թէ՛ Եղիպտոսի Հայք ղիս ազգային Երեսփոխան ընտրած են իրենց վիճակէն, և թէ՛ այդ ընտրութիւնը կընդունիմ կամ ոչ՝ փութամ յայտ առնել Ձեր Բարձր Սրբազնութեան

Արդարեւ փափաքելի էր որ քան զիս արժանաւորին վրայ ըլլար ընտրութիւնը, բայց քանի որ այսպէս հաճոյ թուեր է իրենց, ինձ կը մնայ յարդել այն ժողովրդեան կամքը (որոյ մէջ կօթնամեայ պանդխտութեանս միջոցին միայն սէր վայելած եմ) և որ և է կերպիւ ազգիս օգտակար ըլլալու ջանալ:

Որ և խոնարհութեամբ մատչելով ի համբոյր Ս. Աջոյն Բարձրաշնորհ Սրբազան Տեառնդ ազգասիրի:

Մնամ Նորին ամենախոնարհ ծառայ  
Ա. Մուրադեան

24 Յունվար 1880

ի Գաղկեդոն

(Տես ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչպէս տեղեկացաք այս գրութիւններէն Եղիպտոսի Եղիպտոսի Երեսփոխանն ընտրած են, որոց սահմանադրական հանգամանքը Քաղ. Ժողովը հաստատած է իւր ծանօթագրով:

Մեզ կը մնայ այժմ կատարուած ընտրութեանց օրինաւորութիւնը քննել, ուստի ձեր նկատողութեան կը ներկայացնեմ նախ Եղիպտոսի վիճակին ընտրութիւնն և կը հրաւիրեմ զձեզ, որ շնորհ ընէք յայտնել, եթէ Եղիպտոսի վիճակն մ'ունիք: Աւշադրութեան արժանի կէտ մ'է որ ընտրելոյն յանձնառութիւնը չէ կրցած ստուգուիլ իւր բացակայութեան պատճառաւ, հետեւարար անյայտ կը մնայ թէ պիտի կրնայ ստանձնել նա՞ պաշտօնն, որու կոչուած է ազգին կողմէ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Մենք ընտրութեան տեղեկագրին օրինաւորութիւնը կրնանք վաւերել, ընտրեայն իրր ուղեւոր նկատելով որ վերագարծին հրաւիր կընդունի իւր պաշտօնը կատարելու, և երբ յանձն առնու կը շարունակէ զայն, եթէ ոչ՝ նոր ընտրութիւն տեղի կունենայ: Բայց այժմէն հարկ չեմ տեսներ այս մասին անօրինութիւն մ'ընելու:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Երեսփոխանական ընտրութեանց վաւերացման համար կանոնը կը արամազրէ որ ընտրելեաց յանձնառութիւնը նախապէս ստուգուած և օպահովուած լինի: ուստի առանց այս կէտն ստուգելու՝ օրինաց համաձայն չէ ընտրութիւնը վաւերել: և տեղի լաւագոյն է ըստ ին յետաձգել առ ժամս տեղեկագրին վաւերացումը: մինչև որ ընտրեալը վերագառնայ իւր ուղեւորութենէն, և կարելի լինի ստուգել իւր յանձնառութիւնը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Եթէ անժամանակեայ չէ իւր բացակայութիւնն, ընտրութիւնն ինքնին կ'ոչնչանայ արդէն, ուստի ես կ'առաջարկեմ փոխանակ անոր վերագարծին սպասելու՝ զրել և տեղեկանալ թէ անժամանակեայ է իւր ճանապարհորդութիւնն, և

թէ կընդունի իրեն յանձնուած Երեսփոխանական պաշտօնը: և տեսնէք արդէն որ Երեսփոխաններէն շատեր թէ և Պօլսոյ մէջ են, բայց ամիսներով բացակայ կը դնուին ժողովոյ նիստերէն, և երբ այսպէս նորընտիրներէն մին թիֆլիս, միւսն Մանչէսթըր բնակին, դիւրին է դուշակել թէ ժողովոյ դումարումներն ինչ դժուարութեանց կը հանդիպին:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Ի մօտոյ գիտեմ որ Յովակիմեան էֆէնտի ուղեւորութիւնն անժամանակեայ է, և այս պատճառաւ առաջարկեցի՝ վաւերել իւր ընտրութիւնն, զայն իրր ճանապարհորդ նկատելով: Երբ սակէ առաջ Շիշմանեան էֆէնտին Երեսփոխան ընտրուեցաւ, բացակայ էր Պօլսէն և թիֆլիս կը գտնուէր, սակայն գիտէիք որ իւր բացակայութիւնն անժամանակեայ էր, ուստի վաւերացուցինք ընտրութիւնն, և վերագարծին Շիշմանեան էֆէնտին ընդունեց պաշտօնն և վարեց ձիշդ մի և նոյն վիճակին մէջն է այժմ խնդիրն, ուստի արդելք մը չեմ տեսներ այս ընտրութիւնը վաւերելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ա. ԷՖ.— Մտոյգ է ինչ որ Քափամաճեան էֆէնտին խօսեցաւ, Շիշմանեան էֆէնտի ընտրութեան վաւերացման նկատմամբ, միայն թէ անոր հետ մի և նոյն թաղէն Երեսփոխաններ ալ ընտրուած էին, և ընտրութեան տեղեկագրին իւր ամբողջութեամբ վաւերացաւ ժողովն, առանց խնդրոյ ներքեւ գրուելու Շիշմանեան էֆէնտի բակայութիւնը: Բայց այժմ ես դժուարութիւն չեմ տեսներ վաւերացումն յետաձգելով ստուգելու կանխաւ թէ Յովակիմեան էֆէնտի բացակայութիւնն անժամանայ է՝ թէ մշտնջենաւոր

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ձեմ կարծեր որ շատ բանաւոր լինի և մանաւանդ գործնական արդիւնք մ'ունենայ տեղեկագրին վաւերացումը մինչև որ նորեկոյն վերագարծը յետաձգել, կամ կ'ունի վաւերել ընտրութիւնն, առանց ընտրելոյն յանձնառութիւնն ստուգելու, զայն

իրր ճանապարհորդ նկատելով, ինչպէս առաջարկեցին մեր ընկերակիցներէն երկուքը: Կանոնը կը պահանջէ որ ընտրելոյն յանձնառութիւնը օպահովուալ լինի, և քանի որ այս կէտն անյայտ կը մնայ, անշուշտ յաւազոյն է Ղազարոսեան էֆէնտի առաջարկութեան որդոյն հետեւելով զրել Յովակիմեան էֆէնտի և անոր վերագարծին ու յանձնառութեան նկատմամբ պատասխան ստանալէ ետեւ՝ ընտրութեան տեղեկագրիը ժողովին ներկատման ներկայել:

Այս մասին այժմ ժողովին կամքը պիտի հարցնեմ, եթէ ուրիշ խօսք ուղող չկայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ես կընդունիմ այդ վերջին առաջարկութիւնն. միւս կողմէ գիտել կուտամ նաեւ ժողովիդ որ ընտրութեան տեղեկագրին մէջ չէ նշանակուած թէ Եղիպտոսի գաւառական ժողովոյ սնդամոց թիւը քանի է, և կ'առաջարկեմ այս կէտն ալ միանգամայն ստուգել:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Այս մասին կրնամ տեղեկութիւն տալ ձեզ: Եւ Եղիպտոսի գաւառական ժողովը 21 անդամէ կը բաղկանայ: հետեւարար ընտրութիւնը մեծամասնութեամբ կատարուած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Սակայն ցաւալի է որ մեր Գաւառական վարչութեանց զիւանները պաշտօնական գրութեանց խմբագրութեանը նուազ խնամ և ուշադրութիւն կընծայեն, և այսպիսի ամենապարզ խնդիրներու վրայ եկած տեղեկագրերն անգամ տակաւին կանոնաւորութեանէ դուրկ են: Այս վիճակին մէջ փափաքելի է որ տեղեկագրերն դեռ եւս Ազգային ժողովոյ չհաղորդուած գէթ Պատրիարքարանի զիւանատունն անոնց թերին լրացնելու հոգ տանի, հարկ եղած ծանօթութիւնները կցելով անոնց:

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը քուէի կը դնէ և ժողովը մեծապոյն մասամբ կ'որոշէ զրել նախապէս Յովակիմեան

էֆէնտիի եւ անոր պատասխանն ստանալէ եւ յանձնարութեան կէտն ստուգելէ ետեւ ընտրութեան տեղեկագիրը նկատողութեան տանու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը մնայ այժմ եզրուած սի երեսփոխանական ընտրութիւնը , զոր ժողովոյ գիտողութեան կը ներկայացնեմ : Կը մարեցիք անշուշտ որ ընտրութեան տեղեկագիրն միւսին նման անյիշատակ կը թողու գաւառական ժողովոյ անդամոց թիւն , ուստի Գիւանը կը խնդրէ Ազգային Աւարչութենէն որ շնորհ ընէ տեղեկութիւն տալ այս մասին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ես ալ այդ կէտը նշմարեցի , սակայն չուզեցի գիտողութիւն ընել , մտածելով որ եզրուած երկար ժամանակէ ի վեր չէր մասնակցած երեսփոխանական ընտրութեան , եւ հիմա որ ընտրութիւնը կատարած էր , այդ գաւառի երեսփոխանին մասնակցութիւնը վայելելու փափաքով մանրամասն գիտողութեանց կարեւորութիւն չտուի :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Եզրուած գաւառական ժողովն 21 անգամէ պիտի բաղկանայ , այս վիճակը միայն մէկ թեմ ունի , այն է Աղէքսանդրիա , որ չէ ուզած գաւառական ժողովոյ ընտրութեան մասնակցիլ , եւ այս պատճառաւ որոշեալ թիւը լրացած չէ : Սակայն ժողովն իւր անդամոց մեծամասնութիւնն ունի , հետեւապէս ըստ կանոնի կրնայ գումարուիլ եւ գործել : Իսկ կեդրոնական երեսփոխանին ընտրութիւնն , ինչպէս տեղեկագիրը կը յիշէ , 11 անդամոց բուէարկութեամբ կատարուած ըլլալով , օրինաւոր է

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այդ բացատրութիւնը գոհացուցիչ է , եւ եթէ ուրիշ գիտողութիւն ունեցող չկայ , քուէի պիտի դնեմ ընտրութիւնը :

Ուրիշ գիտողութիւն տեղի չունենար ,

հետեւապէս Ատենապետ Էֆէնտիին քուէի կրնալ թարկէ եզրուած երեսփոխանական ընտրութիւնն , եւ ժողովը միաձայն անոր օրինաւորութիւնը հաստատելով ԵՂ ՎԱԻԵԲԷ եւ Ազգային երեսփոխան կը ՀՈԶԱԿ :

Արքայաճամ էֆէնտի Մուրատեան

5

Պատասխանի հարցման երեսփոխան Մ. Քալիամաճեան ԷՖԷՆՈՒԻ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը յիշէք անշուշտ որ մեր ընկերակիցներէն Քալիամաճեան Էֆէնտիին ժողովի վերջին նիստերէն միոյն մէջ հարցում մ'ուզած էր առ Ամեն Սրբազան Պատրիարքն այն զրոյցին նկատմամբ , որ կը համարուէր թէ Տ. Գարեգին վարդապետ Սրբանձտեանց հըրաւէր կարգացած լինի Տիգրանակերտի մերադնէից , որ իրենց որդւոց կրթութիւնն պապականաց դպրոցներուն յանձնեն : Այս հարցումն Ամենապատիւ Սրբազան Պատրիարքին յղուած լինելով ժողովին կողմէ , նորին Սըրբազանութիւնը փութացեր է հրաւիրել զՏէր Գարեգին վարդապետ այս խնդրոյն վրայ բացատրութիւն տալու , եւ ստանալով դայն , ահաւասիկ կը հաղորդէ այս անգամ Ազգ. ժողովին նոյն իսկ Տ. Գարեգին վարդապետի պատասխանադրին , որու վրայ Սրբազան Պատրիարք Հօր ստորագրութեան ներքեւ նշանակուած են սա տողերն ,

« Ազգային Ընդհ. ժողովոյ ներկայի ի պատասխանի հարցման » .

Հետեւաբար ըստ յանձնարարութեան Սրբազան Պատրիարք Հօր Գիւանս կը փութայ ներկայել ձեզ իրեն աւանդուած պատասխանագիրն :

Յետ ընթերցման պատասխանագրին ,

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— (Հեղինակ հարցման) Ես հարցման նիւթ եզող խնդիրը փունջ լրագրին մէջ կարգացի այն ատեն , ընական

էր որ այսպիսի դայթակղելի հրատարակութեան մը վրայ զգածուէի , եւ իբր երեսփոխան իրաւունք ունէի անշուշտ հարցում ուղղելու : Գոհ եմ եւ շնորհակալ որ Սրբազան Պատրիարքն այս մասին բացատրութիւն պահանջեր է Տ. Գարեգին վարդապետին , սակայն ներու ինձ զիտել տալ որ եկած պատասխանը կծու ոճ մունի , եւ թշնամական ակնարկութիւններ կը պարունակէ իմ երեսփոխանական պաշտօնիս դէմ : Մի թէ ներքի չէ երեսփոխանի մ'աղղային խնդրոյ մը վրայ հարցում ուղղել , մի թէ թշնամանքն է բաժին հարցման հեղինակին : Այս թշնամանքն ըստ որում իմ երեսփոխանական իրաւանցս դորձադրութենէն հետեւած է , ուստի միայն ինձի չվերաբերել , այլ ատեն երեսփոխանաց կը բողոքեմ Տ. Գարեգին վարդապետի այդ թշնամական ակնարկութեանց դէմ , եւ կազաւեմ , Տեսարք , որ հաճիք ուշադրութիւն նուիրել իմ բողոքանացս :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Իրատ փափուկ գիրքի մը մէջ խօսք առի , բայց նպատակս ուրիշ բան չէ , այլ միջոց մը ցոյց տալ , որով կարելի լինի ճշտել փակել այս միջադէպն , եւ կը յուսամ որ ժողովը կը հաճի ընդունել առաջարկած միջոցս : Իրտ է որ շատ խիստ է Տ. Գարեգին վարդապետի պատասխանը հարցման դէմ , սակայն իրաւ է նաեւ որ անտեղի էր լրագրական հրատարակութեան մը վրայ՝ դալ հարցում ուղղել յատենի ժողովոյ այնպիսի անձի մը դէմ մանաւանդ որ գերծ է կասկածանքէ : Հրատարակային թերթեր շատ բան կը դրեն , բայց ամեն հրատարակութեան վրայ հարցում չուղղուիր , եւ արդէն ուղիղ բանն ալ ցոյց կուտայ թէ ինչ սատիճան ստուգութիւն ունի հրատարակեալ զրոյցը : Ես երբ կարդացի այդ տողերն , ծիծաղեցայ , ինչպէս որ ինձի հետ սերիշներ ալ , ա՛յնքան անհաւատալի էին :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ.— (Ընդմիջելով) Եւ սակայն Տ. Գարեգին վարդապետ Տիգրանակերտի պատուիրակն էր :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ.— (Շարունակելով) Եթէ Տ. Գարեգին վարդապետ անցեալին մէջ դայթակղելի արարք մ'ունեցած լինէր , անշուշտ այդ հրատարակութիւնը կասկած կը զարթուցանէր իւր վրայ , եւ այն ատեն հարցումը շատ բընական էր . սակայն անոր ազգային զգացումներն երկրայութեան ներքեւ չէին իյնար , ուստի շատ բանաւոր չէր անմիջապէս խնդրոյ նիւթ ընել համաւեալ զրոյցը : Կերելի թէ Տ. Գարեգին վարդապետ վերաբորում մը կրելով իրեն դէմ յարուցեալ կասկածանքէն , խիստ ոճով պատասխաներ է հարցման , եւ այս կերպով ինքն ալ փոխարինութիւն մ'ըրեր է : Արդ՝ այս միջադէպը փակելու լաւագոյն միջոցն է ըստ իս , այդ պատասխանագրին այն մասերն միայն արձանագրել որ ուղղակի հարցման նիւթ եզող խնդրոյն կը վերաբերին , իսկ մնացեալ մասերն , որ Քալիամաճեան էֆէնտիի բողոքանաց տեղի տուին , եւ օտոր են խնդրէն , ի բաց թողուլ , որով երկու կողման ալ հատուցում մ'աղած կը լինի , եւ խնդիր չմնար այլ եւս :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Մի թէ ես այդ հարցումն ուղղելով եղած հրատարակութեանց անպատճառ հաւատ ընծայած կը համարուիմ , որ Տ. Գարեգին վարդապետ այդքան կը սըրտամբի ինձի դէմ : Եթէ այդ հրատարակութիւնը ձրի զըպարտութիւն մ'էր իրեն դէմ , ընդհանրապէս պէտք էր իմ հարցմանս համար գոհ լինէր ինք , որ այդ առթիւ ի պաշտօնէ պիտի հերքուէր այդ զըպարտանքն : Սակայն ցաւալի է որ Տ. Գարեգին վարդապետ չընթաներ այս կէտն եւ հարցման դէմ կը բողոքէր :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ես կը կարծեմ թէ այդ պատասխանը պէտք է իւր ամբողջութեամբն արձանագրել , քանի որ բողոք կը լրայ թէ ծանր ակնարկութիւններ կան , եւ ըննադատական խօսքեր տեղի կունենան , որոնք անշուշտ պիտի արձանագրուին : Բայց եթէ պատասխանագրին այդ մասերը պիտի յտալուին , այն ատեն հարկ կը լրայ Քալիամաճեան եւ Քալիամաճեան էֆէնտիներու կողմէ այս կէտին վը-

բայ եղած խօսքերն ալ ատենագրութենէն ի բաց թողուլ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Կաղաչեմ որ լուսաւորութիւն ընծայէք առաջարկութեանս : խնդիր չյարուցանելու զգուշութեամբ ըրի ես զայն :

Հարցման դէմ տրուած պատասխանն , զոր լսեցինք պահ մ'առաջ , այնպիսի կծու լեզու մը գործածած է հարցման հեղինակին , այն է Երեսփոխանի մը դէմ , որ ստուգիլ խնդիր յարուցանելու տեղի կուտայ , բայց միւս կողմէ , ինչպէս խոստովանեցայ , հարցումն ալ անպարանայ արդիւնք է , եւ ասկէ հետեւած է պատասխանին խոստութիւնն : Աստի խնդիրը վերջացնելու համար՝ առաջարկեցի որ պատասխանագրին միայն հարցման նիւթին վերաբերեալ մասերն արձանագրուին , եւ միւսներն ի բաց թողուին : Կը կարծեմ թէ այս եղանակն ամենքն ալ կը գոհացնէ , եւ այս միջոցէսը հետեւանք իմ շունենար :

ՁԱՅՆԵՐ.— Կը կրկնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այս խնդիրը պարզ միջոցէս մ'է , որ ուրիշ միջոցէս մը , այն է հարցման մը դէմ տրուած պատասխանէ մը ծագում առաւ , որ քանի մը ծանր ակնարկութիւններ պարունակելուն պատճառաւ բողոքայ ձայներ յարոյց ժողովին մէջ , եւ քննադատութեան տեղի տուաւ : Կը տեսնեմ որ փափաղեան էֆէնտիլի առաջարկն իբրև փոխարձակ հատուցում զամէնքը գոհացնելու ընտրութիւն մ'ունի , եւ արդէն արձագանք կը գտնէ ամեն կողմէ , ուստի այս մասին ժողովից կամքը կը հարցնեմ :

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտիլի խնդիրը քուէի կը դնէ , եւ ժողովն ըստ առաջարկութեան փափաղեան էֆէնտիլի մեծագոյն մասամբ ԿԱՐՈՇԷՆ Սրուանձտեանց Տ. Գարեգին վարդապետի պատասխանագրոյն ուղղակի հարցման նիւթին վերաբերեալ մասերն ատենագրութեան մէջ արձանագրել , միւսներն ի բաց թողուլ :

Ահաւասիկ Տ. Գարեգին վարդապետի պատասխանագրին այն մասերն , որք ուղակի հարցման նիւթին կը վերաբերին :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր :

Անցեալ դեկտ. 19 ամսութիւ նամակաւ կը հրատարէք զմեր նուաստութիւն բացատրութիւն տալու Երեսփոխանի մը կողմէ տեղի ունեցած հարցման մը , զոր ժողովոյ որոշմամբ մատուցուած է Ձեր Սրբազնութեան քննելու համար , եւ է « Ստոյգ է որ Սրուանձտեանն գիր գրեր է Տիգրանակերտ , որպէս զի տեղւոյն ազգայինք իրենց զաւակները պապականայ դպրոցները զրկեն : Եթէ այս մասին որ եւ է տեղեկութիւն չ'կայ , կառաջարկեմ որ քննութեան ենթարկուի սոյն խնդիրը » :

Շնորհակալ եմ Ս. Տէր , շնորհակալ եմ որ Ձեր Հայրութիւնը պատասխանած է : Շնորհակալ եմ նաև որ բարեհաճեցէք զրաւոր բացատրութիւն ուղելու : Եւ ահաւասիկ :

. . . . .

Կաղաչեմ , ներեցէք համարձակութեանս , եւ թողէք որ հակառակ իմ ամօթխածութեանս բարձրաձայն աղաղակեմ թէ՛ ես չեմ և անկեղծ հայ եմ ,

Չերմեռանդ և անձնուէր պաշտօնեայ եմ իմ հայրենի Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն , մտադիւր և անխոնջ մշակ իմ Ազգային բուն կեանքին և ապագային , աղքուապէս գոչելով 'ի գիր և 'ի բան , հրապարակաւ և առտնին քարոզելով և ուսուցանելով Ազգային դաստիարակութիւն , Ազգային լուսաւորութիւն , Ազգային միութիւն և Ազգային փրկութիւն , զորս մի միայն Հայկական անտրաստ և ազատ Եկեղեցւոյ մէջ գտած եմ և պաշտած եմ : Ամերիկացւոյն և Հռովմայեցւոյն օտար և օտարացուցիչ վարդապետներէն թերեւս ոչ ոք քան զիս առաւել կը խորչի . սակայն դարուս քաղաքակրթութեան առջեւն ալ չեմ կրնար դատապարտելի երեւնալ , սիրով տեսնուած եմ ամենուն հետ , սրբտովն կարեկցած եմ մեզմէ բաժանեալ եղբարց , և 'ի հոգի ցաւելով մեր 'ի հոգի սիրեցեալ Հայ ժողովրդեան վրայ , հրաւիրած եմ իրենց բոլոր ուշագրութիւնը և աշխատութիւնը չ'ինայելու Ազգային վարժարանաց բոցման և բարւոքման . դերագանցելու մեր լուսաւորութիւն , բարոյականութիւն , և քաղաքակրթութիւնը , որպէս զի օտարը արտահալած լինի Հայկական փարախէն և ոստոցեալ մանկունք Հայրենեաց դասնան 'ի գիրկս և 'ի ստինս Մօրս մերոյ Ս. Եկեղեցւոյ :

. . . . .

Թէ մեր ներկայութիւնը և խօսքերու խորհուրդները ինչ ներգործութիւն ըրին Տիգրանակերտի մէջ մասնաւորապէս շատերը խղճի մտօք վկայած են . բայց մեր չարախօսներ և զրպարտիչներ

. . . . . խաւարի թագաւորութեան հաստարիմ զինուորաց նման սուր և նեւառած և մաս մը միամիտ ու խաբուած ժողովրդեան ետեւը մտած կը խոցեն մեր անձը , կը հարուածեն մեր անունը , հաշածելով զամենայն ոք , որ համարձակեր միանգամ դիտողութիւն ընել իրենց սոցիալութեան և վնասակարութեան վրայ :

Ատոնք կուզեն այնպիսի եկեղեցական գտնուի հոն , որ իրենցմէ տգէտ լինի , իրենցմէ ակնածէ , իրենց ըսածին և ուղածին պէս վարուի ու վարէ , ընկերութիւններ , եկեղեցիներ , ժողովներ և ժողովուրդ իրենց ձեռքն ունենան , խաբբալեն . խաբեն , ուտեն , և միշտ սուտ խօսելով , սուտ գրելով յաղթանակ տանին և բոլորի ուշքը գերեն գրաւեն :

Ինչ փոյթ թէ Ազգը մարդու պէտք ունի , դարը : տարին , օրը ուսեալ և կրթեալ Հայ կուղէ . ինչ փոյթ թէ բազմաթիւ Հայերը՝ դեռ Հայերէն լեզուն չգիտեն և քրդերէն կը բարբառեն . ինչ փոյթ թէ չնչին խնդրոց համար մեծամեծ գումարներ կը մխտուին , այն ինչ դատարակութեան համար և ոչ դանկ մը կը տան . ինչ փոյթ թէ դուք արիւն քրտինք կը թափէք և ամենայն հայրենասէրք մեծամեծ զոհողութիւններ կը նեն , խորհրդականք կը խոկան , այցելուք արցունք և արիւն հոսելով ամենայնի կը տանին , զամենայն կը կրեն իրենց — այդ ժողովրդեան — բարօրութեան համար . ատոնք և այդպիսիք փորձ առած են և քաջալերուած իրենց ստույթեանց և նենդութեանց մէջ : Այսպէս ճամարիտ հայրենասիրութիւնը , ճամարիտ առաքինութիւնը , ճամարիտ ծառայութիւնը կը հարուածուի . ուրեմն դեռ

. . . . .

հետևի եւ՛ք ՚ի փրկութենէ : Աստուած իմ, մենք վահագաններ կը կանչենք, վասակներ գուրս կուգան : Այլ ես պիտի շարունակեմ իմ անձնութեանս զորութեամբ եւ՛ առ Ս. Եկեղեցիս, առ Ազգս, եւ առ Հայրենիս, մնալով յԱստուած ապաստան եւ կարօտ Ձեր Ս. օրհնութեանս :

Ն. Սրուանճտեան Գարեգին վարդապետ 1880 Յունվար 16, յԱԿՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Այս որոշմամբ կը վերջանայ ահա առաջիկ ծագած միջադէպն. իսկ հարցման միջադէպն արդէն ըստ կանոնի դոցուած է ինքնին, հաղորդուած լինելով ժողովիս անոր պատասխանը :

6

Խարբերդի պաշտօնաւանկ առաջնորդ Բագրատունի կարապետ վարդապետի աղերսագիրն.

Խարբերդի դադարեալ առաջնորդ Բագրատունի կորապետ վարդապետի կողմէ ուղղեալ յետագայ աղերսագիրը կարգացուեցաւ :

Վսեմախոյլ Ատենապետ Էֆէնտի Պատկ. Ազգ. Ընդհանուր Ժողովոյ

Լսելով որ Խարբերդի նոր Առաջնորդի մը ընտրութեան համար հրահանգ գնացած է ՚ի Խարբերդ Ազգ. վարչութեան կողմէն, մինչդեռ ես յիշեալ դաւառին օրինաւոր Առաջնորդն եմ, յանիւրաւ եւ առանց կարեւոր պատճառի յանակնկալս Պօլիս կանչուեցայ, վեց ամիսէ ի վեր վարչութեան կողմէն բնաւ ի Պօլիս կոչմանս մասին բացատրութիւն չեմ տուած, եւ մտադիր իսկ էի այս մասին

բողոքելու, բայց Ամեն Ս. Պատրիարք Հօր յորդորանաց եւ տուած վստահութեան վրայ լուած էի, բայց այժմ սոյն գրոյս կը բողոքեմ Ազգ. վարչութեան այդ որոշման դէմ եւ միանգամայն պատուիրակաց դէմ, որք Տիգրանակերտէն հեռագրաւ իմ պաշտօնակութիւնս խնդրած են եղեր, մինչդեռ ես Խարբերդէի, իրենց գործին բնաւ արդեւէք մը չէի : Վստահ լինելով պատկառելի ժողովոյդ արդարասիրութեանը վրայ դատաստան եւ քննութիւն կը պահանջեմ, յանուն իրաւանցս եւ պատուոյս եւ յանուն Խարբերդի հազարաւոր ժողովրդեան եւ Ազգիս շահուն :

Մնամ աղօթարար վասն Ազգիս կարապետ վրդապետ Բագրատունի 25 Յունվար 1880, ՚ի Կ. Պօլիս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Ահա առաջիկ ուրիշ դադարեալ առաջնորդ մ'ալ, որ բողոք կը բռնայ առ Ազգ. Ժողովն, իւր պաշտօնակութեանը համար, եւ դատաստան ու քննութիւն կը պահանջէ : Իսկ խնդրոյն բնութիւնը կը պահանջէ յղել զայն Յարաբերութեան դիւանին ի նախաքննութիւն : Եթէ զխտորութիւն մը չունիք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.—Կաղաչեմ որ ուշադրութիւն ընծայէք այդ կէտին, որ մի՛ գուցէ սխալ կատարուի յղումը :

Փիլիսոսոս եպիսկոպոսի խնդիրն ալ ի սկզբան Յարաբերութեան դիւանին յղուեցաւ իբր մասնաւոր խնդիր նկատուելով, սակայն ի վերջէ ժողովն Երաւասութեան դիւանին յղել պատշաճ դատեց իբր վարչական խնդիր : Ուստի ես կառաջարկեմ այս ալ Երաւասութեան դիւանին յղել այժմէն, որպէս զի

վարչութեան բացատրութիւններն ստանալով եւ նախաքննելով խնդիրն իւր տեղեկագիրը ներկայացնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.—Ես աւելի պատշաճ կը տեսնեմ նախապէս վարչութեան յղել խնդիրն եւ անոր բացատրութիւններն ստանալէ ետեւ՝ նախաքննութեան յանձնել :

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.—Շատ աղէկ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.—Կը համակերպիմ այս առաջարկութեան եւ ետ կառնում իմս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Եթէ Տիգրանակերտի խնդիրն ի սկզբան Յարաբերութեան դիւանին յղուեցաւ, պատճառն այն էր որ դաւառական խնդրոյ մ'երեւոյթն ունէր այդ խնդիրն, ուստի սխալ չէր Յարաբերութեան դիւանին յղումն. սակայն ի վերջէ նոր նոր դարձուածներ առաւ, եւ իւր գոյնը փոխելով վարչական խնդրոյ մը կերպարան ստացաւ, եւ այն ատեն հարկ եղաւ անգամ մ'ալ Երաւասութեան դիւանին քննութեան բովէն անցնել զայն : Իսկ գալով մեր ներկայ խնդրոյն՝ նախաքննութեան յանձնելէ առաջ՝ վարչութեանէն բացատրութիւն խնդրելու առաջարկութիւն մը կայ, որ իրեն ձայնակիցներ ունի, այս մասին ժողովին կամքը պիտի խնդրեմ քուէի զընելով առաջարկը :

Տ. ՅԱԿՈՐ Վ. ԱՆՈՏ.—Շատ աղէկ. բայց յառաջիկայ նիստին տեղեկագիրը բերելու պայմանաւ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.—Ի դիմաց վարչութեան կը յայտարարեմ որ եթէ ժողովը իւր բացատրութիւնները լսել կուզէ, պատրաստ է յառաջիկայ նիստին զրով մատուցանել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Շատ աղէկ, ուրեմն յառաջիկայ նիստին տեղեկագիրը բերելու պայմանաւ. քուէի կը դնեմ խնդրոյն առ վարչութիւնն յղումը :

Եւ հետեւապէս Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ խնդիրը, եւ ժողովը միաձայն կՈՐՈՇէ ըստ առաջարկութեան վարչութեան Էֆէնտի, Բագրատունի կարապետ վարդապետի աղերսագիրն յղել առ Ազգ. վարչութիւնն, յառաջիկայ նիստին անոր բացատրութիւնն լսելու եւ ըստ այնմ զարժանն տնօրինելու համար :

7.

Երեսփոխան Ս. Փափագեան Էֆէնտիի առաջարկը

Երեսփոխան Փափագեան Էֆէնտիի կողմէ մատուցեալ յետագայ առաջարկութիւնը կարգացուեցաւ :

1879 Մայիս 11 թուականաւ ըստ որոշման բարենորոգմանց Յանձնախմբին եւ հաճութեամբ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր առ ամենայն առաջնորդական վիճակս չորս կարեւոր Հրահանգներ զրկուեցան, յսրոց մին էր հետեւեալը :

«Վիճակիդ իւրաքանչիւր գիւղօրէից «մէջ վարժարաններ ունենալու պէտք է «մեծ հոգ տանիլ : Գոհութեամբ կը տեսնուի որ շատ գաւառաց մէջ այս հոգը «տարուած է եւ կը տարուի. եւ ուր որ չէ «տարուած, պէտք է առժամայն դէթ եկեղեցեաց գաւթներուն մէջ գիւղին մասնակներնու աղջիկներն հաւաքել եւ եթէ «անմիջապէս յարմարաւոր դաստիարակ «մը ճարել կարելի չըլլայ, դոնէ քահանային «յանձնել որ անոնց կարդալ ու դրել եւ «թուել ուսուցանէ. մինչեւ որ կարելի «ըլլայ յատուկ վարժարան եւ դասատու «ուսնեալ : Այսպէս պէտք է չափահաս «ներու ալ կիրակի եւ տօն օրեր կարգալ

«գրել և թուել ուսուցանել, որոց փոր-  
«ձը տուած են արդէն գաւառներէն ու  
«մանք. և որոց պէտք է հետեւին միւս  
«գաւառներն ալ» :

Պատրիարքական փոխանորդ Տ. Մատ-  
թէոս սրբազան այս չորս հրահանգներն  
ստորագրելով ըսած էր. «վստահ եմք որ  
այս չորս հրահանգներն ճշտի- գործադ-  
րել կը փութայք, և ահապէս ինչ մանրա-  
մասնորէն ինչ գրէ՝ ա- Բը ՚ի ժամանա-  
կին : »

Արդ կ'ուզեմ իմանալ թէ այս հրա-  
հանգը ճշգիւ գործադրուած է մի, և  
թէ որ վիճակներն գործադրուած են :  
Գիտեմ որ այս կերպով հարցում ըրած  
կ'ըլլամ առ Ազգ. վարչութիւնն, և ըստ  
որում վարչութիւնն ինքն ալ պիտի հար-  
ցնէ իւրաքանչիւր առաջնորդական վիճա-  
կաց, ուստի իմ նպատակիս դառնալով  
կ'առաջարկեմ որ

«Ազգ. ժողովս ստիպողութիւն տա-  
լով խնդրոյն յանձնարարէ վարչութեան  
որ անմիջապէս յատուկ շրջաբերականա-  
առ ամենայն առաջնորդական վիճակս  
ծանուցանէ Ազգ. ժողովոյս որոշումն և  
հրաւիրէ զամենքն որ անցեալ Մայիս 11  
թուականաւ իրենց տրուած հրահանգաց  
այս մասին վրայ հաշիւ տան առ կեդր-  
վարչութիւնն, որ զանոնք իրենց բնագ-  
րովը ներկայացնէ առ Ազգ. ժողովս. որ-  
պէս զի Թուրքիոյ Հայոց ներկայացուցիչ  
այս ժողովս գիտնայ և հասկնայ թէ որ  
վիճակներն են որ ազգային յառաջագի-  
մութեան սրտի մտօք կը հետապնդին, և  
Սրբազան առաջնորդներէն ո՞րք են որ առ-  
այդ նպատակ սրտի մտօք կ'աշխատին և  
թէ ինչ արդեւրքներ կան ազգային յառա-  
ջագիմութեան գէմ և զանոնք բառնալու  
ի՞նչ միջոցներ» :

Այս առաջարկութիւնն կ'ընեմ ոչ  
միայն ազգային յառաջագիմութեան խնդ-  
րոյն Ազգ. ժողովիս կողմէն ստիպողական  
մղում մը տալու հարկին վրայ հասնո-  
ւած լինելուս խորհրդով, այլ և վարչա-  
կան կարեւոր անօրինութիւններն և հը-  
րահանգներն մեռեալ տառ չպահելու  
գիտաւորութեամբ : Վասն զի փորձով  
գիտեմ որ այսպէս եղած է շատ անգամ  
և գաւառաց Սրբազան առաջնորդք և  
վարչութիւնք ըստ մեծի մասին անտար-  
բեր գտնուած են կեդրոնական հրահան-  
գաց, օգուտ քաղելով կեդրոնին մուս-  
ցութենէն և շատ անգամ իր հրահանգաց  
մասին թող վարմունքէն և վարչական փո-  
փոխութիւններէն :

Այս առաջարկութեան շարժառիթ  
մ'ալ ունիմ, զոր Պատկառելի ժողովոյդ  
ներկայել կը փութամ :

Մասիայրագրոյ ուղղեալ 1879 դեկտ-  
12/24 թուականաւ և թիղանու Ռուսում-  
նասիրաց ընկերութեան կողմէն այցելու  
եղող Թ. Մ. Մալոեան ստորագրութեամբ  
թղթակցութիւն մը կարդացի նոյն լրագ-  
րոյ 1880 յունվար 28 թուականաւ թեր-  
թին մէջ : Անհնար է որ ազգը սիրող անձ  
մը առանց փղձկելու կարդայ սա տո-  
ղերը «ի՞նչ օգուտ է մի քանի գիւղերու  
մէջը միայն դպրոցներ բանալ, մինչ ան-  
գին հաշարաւոր գիւղեր անդալոց և ա-  
նուսումն կը մնան» : Գարծեալ «Փշալանք  
«անունով գիւղ մը գնացի, ուր գիւղա-  
«ցիք զիս համոզելու համար հրապուրիչ  
«ձեւեր ի գործ դրած ժամանակ ի զուր  
«մի ջանաք և ոչ ընկերութիւն մը յանձն  
«չառներ ձեր գիւղին մէջը դպրոց բա-  
«նալ, ըսի : Պատասխանեցին, մենք Հայ  
— Գրիտոնեայ չեմք միթէ : Վասն զի,

(Յետ ընթերցման)

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այս առաջար-  
կութիւնը նոր բան մը չ'աւհանջեր, պարզա-  
պէս կրկնութիւնը կը խնդրէ այն հրամանաց,  
որ գաւառներն յուղարկուած են ցարդ՝ ժողո-  
վրդեան մէջ ուսում ծաւալելու համար : Զէ  
թէ միայն Մատթէոս Սրբազանի փոխանոր-  
դութեան ժամանակ, այլ անկէ շատ առաջ  
այսպիսի շրջաբերականներ ուղղուած են վի-  
ճակային առաջնորդաց եւ վանահարց եւ ուսու-  
ուէր տրուած է որ դպրոցներ բանան, եւ  
մանկտին կրթելու եւ ժողովուրդը լուսաւորե-  
լու փոյթ տանին : Դեռ այս վերջին անգամ  
կոնգակ մը դրկած ևւ գրեթէ բանադրա-  
նաց նման խօսքեր ըրած եմ ան վանահարց  
եւ առաջնորդաց, որ անխոյժ եւ անտարբեր  
կը գտնուին ազգային կրթութեան խնդրոյն  
մէջ : Բայց եթէ արժան կը դատիք մինչեւ  
ցարդ տրուած պատուէրներուն ստիպողու-  
թիւն տալու եւ զանոնք, ինչպէս ըսաւ Փա-  
փաղեան էֆէնտին, իբրեւ մնաեալ տառ չը  
թողելու համար այս ժողովին անունով ազգու-  
շրջաբերական մ'ուղղուի գաւառները :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը տեսնեմ որ  
Փափաղեան էֆէնտի առաջարկութեան մէջ,  
ժամանոր գիտողութիւն եւ գանգատ կ'ըլ-  
լայ այս մասին Աղթամարայ կաթողիկոսին  
ընթացից վրայ : Երբ ՚ի Պոլիս էր նա, ի՞նչ խոս-  
տումներ կ'ընէր եւ ինչպէս զինքը նախանձա-  
ձախդիր ցոյց կուտար ազգային յառաջագի-  
մութեան, սակայն տեսէք ինչպէս անխոյժ է  
այժմ երբ իւր պաշտօնին զուլիւր կը գտնուի  
ի՞նչ միջոց պէտք է ՚ի գործ զինչ այսպիսինե-  
րու դէմ, որ բռնակալութիւն կ'ընեն : Այս  
կէտը մասնաւոր ուշադրութեան արժանի է :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Տեսուն վանօ-  
րէից խորհրդոյ կը յայտարարեմ որ այս խնդի-  
րըն արդէն ուշադրութեան առած է եւ հը-  
րահանգ մը պատրաստելու կ'ըրաղի, որ քիչ  
ատենէն ՚ի գործ պիտի դրուի :

«ըսի, Աղթամարին խիստ մերձ էք, կա-  
«թողիկոսը պէտք է ձեզ դպրոց բանայ :  
«Աստուած սիրես, պատասխանեցին, ձեր  
«յոյսը վիղարաւորներու վրայ մի դնէք :  
«Անորտ մեզ պէս ազէտ գիւղացիքս կու-  
«ղոտուի միայն գիտեն, պտղի և կողո-  
«պուտ կ'ա՞յ, ահա այն ժամանակ նոքա  
«եքեք կը նային. կաթողիկոսն հապա  
«փ'նչպէս իրենց համար դանձ գիղէ, ե-  
«թէ դպրոց բանայ, դուք գիտէք. մենք  
«կ'ասենք մեզի դպրոց բացէք. սպա թէ  
«ոչ. բողոքականներն պատրաստ են, ե-  
«թէ մենք յանձն առնենք բողոքակա-  
«նութիւնը» :

Նամակագիր էֆէնտին կը յաւելու-  
թէ. Ազգ. վարչութեան ուշադրութեան  
կը ներկայացնեմ այն խօսակցութիւնը,  
որ շեթամարէն 10 վայրկեան միայն հե-  
ուու եղող գիւղի մը մէջ կը լինէր :

Ահա ես ալ իրբեւ Երեսփոխան Ազ-  
գային Ժողովոյ խորին ուշադրութեանը  
համարձակեցայ ներկայացնել զայն : Պէտք  
է յիշել թէ վանսոյ սահմանին մէջ 62  
վանքեր կան մեծ ու պղտիկ և 130 իմօտ  
վարդապետներ ու սարկաւաղներ և դը-  
պիւններ ըստ տեղեկագրի վանօրէից խոր-  
հրդոյ 1874 ամի երբ քանի մը վարդա-  
պետներ միայն վանայ մէջ թողով, մի-  
թէ կարելի չէ միւսներն ամբողջ սվաել  
այդ ուսման կարօտն զգացող գիւղերուն  
մէջ, ուր դաստիարակի պաշտօնն ալ  
փութան կատարել իրենց հովուականին  
հետ. և այսպէս հարիւրաւոր գիւղեր  
ուսմանց փափաքնին կարենան յազեցը-  
նել. մինչեւ ե՞րբ այդ փորպապետներն  
դատարկ պիտի նստին և միայն պտղի ու  
կողոպուտ հաւաքելու պաշտօնը վարեն :

8 Փետր. 1880 Ազգ. Երեսփոխան  
Ս. Պ. Պ. Փափաղեանց

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Սրբազան Պատրիարք Հօր յայտարարութեանց համար չնորհակալութիւն կը յայտնեմ, քանզի գիտեմ թէ ազգային կրթութեան խնդրոյն մէջ Նորին Սրբազանութիւնն որքան փոյթ եւ խնամ կը տանի, շրջաբերականներ եւ հրահանգներ կ'ուզէ գաւառներն, ինչպէս որ նոյն իսկ Մատթէոս Սրբազանի կողմէ գրուած շրջաբերականն ալ, որու ակնարկած էի առաջարկութեանս մէջ, Նորին Սրբազանութեան գիտութեամբ եւ հաւանութեամբն էր: Բայց որպէս զի այդ հրահանգներն ապարդիւն չ'մնան, կ'առաջարկեմ որ Վարչութիւնն Առաջնորդներէն համար պահանջէ անոնց գործադրութեան մասին եւ ընդունած պատասխանը նոյնութեամբ հաղորդէ Ազգ. ժողովոյ: Այս կերպով կը տեղեկանայ Ազգ. թէ ո՞ր Առաջնորդն է որ իւր պարտաւորութիւնն կը կատարէ եւ ո՞րն անփոյթ կը գտնուի առ սոսն կոխելով Ազգին շահերն: այս կերպով խնդիրն հասարակաց ատեանը կ'ելնէ, պատմութեան դատաստանին կ'աւանդուի, եւ անոնք որ ամօթ կզգան, խղճի խայթ մ'ուենին, հարկադրին թերեւս շարժելու, եւ գործադրելու իրենց տրուած հրահանգները:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Ինչպէս գիտէք, երբ որ եւ է առաջարկութիւն ներկայանայ Երեսփոխանի մը կողմէ, օրէն է յղել զայն ձեռքնահաս Դիւանին ի նախաքննութիւն: Եթէ փափազեան է ֆէնտիլի առաջարկութեան ընթերցումէն ետեւ, Դիւանս չփութաց այդ օրինական գործողութիւնը կատարելու, պատճառն այն էր որ Նախագահ Սրբազանն անմիջապէս խօսք առաւ, եւ ինքն ալ տեղեկութիւններ տալով ժողովին խնդրոյն վրայ՝ յարեց թէ շրջաբերական մ'ալ յանուն Ազգային ժողովոյ կրնայ զրկուիլ գաւառներն: Թէ Սրբազան Նախագահ Հօր այս կարծիքն եւ թէ Երեսփոխանաց կողմէ եղած տեսութիւններն ի նկատ առնելով, եղած առաջարկն նախաքննութեան յղելու եւ վիճարանութեան ենթարկելու կարօտ չեմ գտնուի եւ չեմ կարծեր որ հակառակը պիտի գտնուի: Ինչդիրն ազգային կրթութեան եւ յառաջադիմութեան վրայ ըլլալով,

կ'արժէ Ազգ. ժողովոյ ուշադրութեան եւ փութոյն առարկայ ըլլալու, աւստի շրջաբերական մ'ալ յանուն Ազգ. ժողովոյ զրկուիլն օգտակար կրնայ լինիլ:

**Արդ՝** եթէ արժան կը դատւի, խնդիրն այս տեսութեամբ՝ նախապէսով կրնայ վերջանալ:

**ՆԱԻԱԴԱԼ ՍՐԲԱՋԱՆ.** — Փափազեան է ֆիւթ առաջարկը շատ օրինաւոր է, թող անգամ մ'ալ յանուն Ազգային ժողովոյ շրջաբերական մը գրուի եւ պատասխան պահանջուի: Այս ալ նորաձեւ եղանակ մ'է, թերեւս կ'օճնան պարտադանց պաշտօնատարք եւ պէտք եղած ջանքըն ի գործ կը դնեն:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ.** — Ես ալ մեծապէս գո՞ն եմ Սրբազան Պատրիարք Հօր յայտարարութեանէն, բայց ըստ իս լոկ շրջաբերականն եւ հրահանգ ուղղելով եւ պատասխան պահանջելով խնդիրը գործնական ճամբու մէջ չ'մտնեմ, այլ քիչ մ'ալ բռնութիւն պէտք է ի գործ դնել եւ հարկադրել պարտադանցները գործադրելու ինչ հրահանգ որ կը տրուի իրենց: Եստ առաջնորդներ եւ վանահայրեր գիտենք որ թշնամի են լուսաւորութեան եւ այս նպատակաւ եղած ջանքերն իսփանելու համար՝ իսկոյն անհաւատութեան գոյնով պիտի նկարեն զանոնք: Եթէ ազգին մէջէն այդ յայտարարները չ'վերնան, բնաւ արդիւնք մը չ'պիտի գոյանայ: ամենէն զեզեցիկ հրահանգներ եւ շրջաբերականներ փոշիներու մէջ ցեցահար պիտի փոխն, բնաւ գոտ մը յառաջ չ'բերելով: Ուստի յանձնեմք Վարչութեան որ ասոնց նկատմամբ ազգումիջոցներ ի գործ դնէ:

**Տ. ՎԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.** — Ես անձնական փորձառութեամբ կ'ըսեմ թէ մտածուած միջոցներէն եւ ոչ մին կրնայ նպատակին համաձայն արդիւնք մը յառաջ բերել: Գործնական եղանակ մը կայ տրուած հրահանգները գործադրութեան դնել տալու համար, քանի մ'անձինք պէտք է ձիով պարտին գաւառներն, եւ անոնց յարզը ճանչցուի հոս:

**ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ.** — Ես ալ քաջ գիտեմ որ այդ հրահանգները չեն գործադրուիր, եւ բոլորովին անօգուտ կըլլան, քանի որ պատիժ չկայ պարտադանցներուն դէմ եւ աներկիւղ են Նախագահ Սրբազանն առաջարկեց անգամ մ'ալ յանուն Ազգ. ժողովոյ շրջաբերական մ'ուղղել, շատ աղէկ, բայց երբ զայն եւս անգործադրելի թողուն, այն ատեն ինչ պիտի ընենք:

**ԱԼԱՃԱՃԵԱՆ Ն. ԷՅ.** — (Ընդմիջելով) Այն ատեն կը մտածենք:

**ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ.** — (Շարունակելով) Լաւագոյն է այժմէն մտածել այս ամենը, եւ յանձնարարել Սրբազան Պատրիարք Հօր որ խնդիրն պաշտօնէ ձգէ զանոնք, որ փոյթ չեն տանիր Վարչութեան հրահանգները գործադրելու: Ես ալ գաւառները պտըտած եմ եւ ի մօտոյ գիտեմ որ ասանց այս տեսակ խիստ միջոց մը գործածելու՝ անօգուտ է ինչ որ որոշենք, եւ անգործադրելի՝ ինչ հրահանգ որ զրկենք:

**ՇԱԶՊԱԶ Ն. ԷՅ.** — Եղած յայտարարութիւններէն կը տեղեկանանք որ շատ տարիներէ ի վեր գաւառաց մէջ Վարչութեան հրահանգներն անլսելի եւ անգործադրելի կը մնան, ըսել է որ պաշտօնի վրայ գտնուողներն իրենց պարտականութեանց նկատմամբ անփոյթ են եւ պարտադանց Սրբազան Պատրիարքն առաջարկեց շրջաբերական մ'ալ յանուն Ազգ. ժողովոյ ուղղել, շատ աղէկ, թող գրուի . . .

**Տ. ՎԱԶԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.** — (Ընդմիջելով) Բայց ընդունայն ժամանակ կանցնի:

**ՇԱԶՊԱԶ Ն. ԷՅ.** — (Շարունակելով) Թող այդ վերջին փորձն ալ բլլայ, թէ եւ յայտնի է որ ապարդիւն պիտի մնայ: Երանք թէ՛ կը մնայ մտածել թէ՛ ինչ պէտք է ընել ընդհանրապէս այսպիսի պարագայից մէջ եւ ինչ պատիժ անօրինել ազգային պաշտօններու վրայ գտնուող այն ամեն անձանց գէ՛տ, որ պարտադանց կը գտնուին իմ կարծիքս այս

մասին այն է թէ՛ պէտք է այժմէն Վարչութեան յանձնարարել որ այսպիսի պարագայից համար կանոնաց ծրագիր մը յօրինէ քանի մը յօդուածէ բաղկացեալ, որով պարտադանցներուն դէմ տրուելիք պատիժներն սահմանուած լինին եւ Ազգ. ժողովոյ հաւանութեան ներկայելէ ետեւ զայն գործադրութեան դնէ:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Դիտել կուտամ ժողովին որ ատենական գործողութեանց սահմանեալ ժամանակը լրացաւ եւ քիչ մ'ալ անցաւ, հետեւաբար պէտք է կարճել վիճարանութիւնն եւ վերջացնելով այս խնդիրն՝ օրակարգին անցնիլ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Մենք ինչ որ ուզենք ընել, անպարանօք ընել կուզենք եւ բնաւ բան մը չենք ըներ, ահա այս խօսքը կը զրուցեմ ի պատասխանի դիտողութեան Վահան վարդապետի, որ շտապել կուզէ, եւ ի պատասխանի մեր այն ընկերակցաց՝ որ առաջարկիս գործադրութեանէն արդիւնք մը չեն յուսար: Արդէն թիմ առաջարկութիւնս իւր պարզութեան մէջ չ'մնաց շատ, ես զայն իւր բնական վիճակին մէջ կուզեմ պահել: Ես պարտադանցներու համար պատժական կանոնագիր, կամ Վարչութեան հրահանգաց գործադրութիւնն ապահովելու համար որ եւ է եղանակ չեմ առաջարկեր, իմ փափաքս այն է որ Ազգ. վարչութիւնն առաջնորդներէն եւ վանահայրերէն համար պահանջէ այն հրահանգաց գործադրութեան մասին, որ ուղղուած են գաւառները հայ մանկուոյն գաստիարակութեան խնդրոյն վրայ, եւ այդ համարն Ազգային ժողովին հաղորդէ:

Արդարութիւն չէ հաւատարմապէս դամենքն ալ մեղադրել իբր անտարբեր կան գաւառներ, որ ուսման արժէքը կը զնահատեն եւ զարգանալու կաշխատինս Երբ այդ համարատուութիւնը կատարուի, այն ատեն կրնանք տեղեկանալ թէ որո՞նք են պարտադանցներն եւ անոնց վրայ դատաստան ընել: Թերեւս նոյն իսկ Սրբազան Պատրիարքն այդ առթիւնք պիտի ըսէ մեզ «Ահաւասիկ մարդ մ'որ առաջնորդ ընտրուած է, սակայն անարժան է

իւր կոչման եւ չկատարեր իւր պարտքն: Եւ այն ատեն իրաւունք կունենանք ըսելու Նորին Արքայութեան Վերուցէք այդ վիճակէն զինքն եւ վանք մը զրկեցէք. որ երթայ ազգին հացը ուտէ, բայց գէթ շնորհ չտայ անոր:»

ՉԱՅՆԵՐ. — Ի՞նչու ազգին հացն ուտէ ընդունայն:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Ես ըսել չուզեցի որ շրջաբերական չգրուի եւ համար չպահանջուի առաջնորդներէն եւ վանահայրերէն, այլ առաջարկեցի որ սիանդամայն պատժական կանոնադիր մ'ալ չլինուի ազգային բոլոր պարտազանց սաշտօնատարաց համար, վասն զի գիտենք արդէն որ այդ շրջաբերական արդիւնք չպիտի ունենայ, գիտենք նաեւ որ չէ թէ միայն գաւառաց մէջ պաշտօնեայնորդներէն կեդր. Վարչութեան հրահանգաց դէմ ըմբոստ, այլ նոյն իոկ Պօլսոյ մէջ Թաղական խորհուրդներ, կան սր ստէպ անխելի եւ մինչեւ իսկ անպատասխանի կը թողուն Վարչութեան հրահանգներն, հետեւաբար այս պարտազանցութեանց առաջքն առնելու համար ըսի՝ թէ պատժական կանոնադիր մը պէտք է սահմանել:

ԲԱՓԱՄԱՃՆԱՆ Մ. ԷՖ. — Ես կը ձայնակցիմ Շահապէ կ'իջնտի առաջարկին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք չէ մոռնալ որ խնդիրը փափազեան է ֆէնտի առաջարկութեան վրայ է եւ վիճարանութիւնը այնպիսի ընթացք մը կուտայ անոր, որուն ընդունակ չէ խնդիրն, ատենական դործողութեանց շրջանին մէջ, եւ հարկ կըլլայ տարբեր կերպով ելք տալ անոր փափազեան է ֆէնտի առաջարկութեան իմաստն է՝ յանձնարարել Վարչութեան որ յանուն Ազգային ժողովոյ շրջաբերական մ'ուղղէ առաջնորդական վիճակաց եւ հրաւիրէ զանոնք համար տալ ազգային դատարարական նկատմամբ իրենց հաղորդուած հրահանգաց դործողութեան վրայ, եւ ստանալով այդ համարը հաղորդել Ազգ. ժողովոյ Արքայական Պատրիարք Հայրը կընդու-

նի այս առաջարկն իսկ այն ատենաբաններն որ խօսեցան այս խնդրոյն վրայ, կը յարին թէ եւ առաջարկութեան որոշում կամ նպատակին, բայց միջոցներու մասին կը տարբերին իրենց կարծիքներն, եւ ուրիշ եզրանակներ ցոյց կուտան, իբր աւելի դործնական եւ դէպ ի նըպատակն առաջնորդող, Խեղոյ այսպիսի վիճակ մը նախաքննութենէ ետեւ կրնայ երեւան գալ, որ տեղեկագրով մը կը ներկայանայ եւ վիճարանութեան կենթարկուի որոշ հիման մը վրայ: Սակայն քանի որ ժողովը տրամադիր չերեւիր խնդրը նախաքննութեան յղելու, մանաւանդ Արքայական Վատրիարք Հօր յայտարարութենէն ետեւ, ուստի հարկ է փափազեան է ֆէնտի առաջարկն իւր պարզութեան մէջ թողուլ, եւ դործողութիւնը Վարչութեան յանձնարարելով վերջացնել խնդրոյն: Այժմ ժողովին կամաց պիտի դիմեմ որս մ'սին:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Ուշադրութեան արժանի կէտ մ'ալ կայ, որ պէտք չէ անտես թողուլ քանի որ խնդիր կը յուզուի գաւառաց մէջ ուսման ծաւալման վրայ: Երբ գաւառները կը գրեմ որ դպրոցներ բանան եւ մանկան կը թելու փոյթ տանին, ինձ կը պատասխանեն թէ ընկերութիւններ կազմուած են այդ նըպատակաւ. սակայն այդ ընկերութիւնները որ եռանդուն բայց անփորձ եւ ազգային գործոց անտեղեկ երիտասարդներէ կը կազմուին, ի վերջէ կեղնեն իրենց պաշտօնէն դուրս տեղական ազգային գործոց կը միջամտեն, որով մեծ կոխներ եւ յուզումներ կը յարուցանեն եւ ըստ տաճկական առածին՝ «Յօնք շինելու ատեն աչք կը հանեն»: Ասոնց ալ սահման մը դնել պէտք է, կը յիշեմ որ Տիգրանակերտի խոտովութիւնն ալ այսպիսի ընկերութեան մ'երեսէն ծագում առաւ: Այնպէ՞ս չէ, Մասութեամբ Արքայական:

ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ստոյգ է Արքայական Պատրիարք Հօր զխոտովութիւնն: Երաւասիրաց անուն ընկերութիւնը վատեց Տիգրանակերտի մէջ խոտովութեան կայծն ի սկզբան: Անշուշտ ընկերութիւններն օգտա-

կար են. սակայն երբ իրենց պաշտօնին սահմանէն դուրս արշաւեն, մեծ խնդիրներ եւ պատասխանատուութիւններ կը ծագին, որոց առջեւն առնելու համար պէտք է Վարչութիւնը սահման մը գծէ այդ ընկերութեանց:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անշուշտ Վարչութեան հեղինակութեան կը վերաբերի դպրոցներու բացման համար՝ հրահանգ տուած ատեն պէտք եղած պայմաններն նշանակել, եւ նախահոգ զգուշութեամբ արգելուլ այդպիսի անտեղութեանց ծագումն, որ վնասակար եւ ցաւափիթ են անշուշտ:

Եւ հետեւապէս Ատենապետ է ֆէնտին վերոյիշեալ բանաձեւով քուէի կը դնէ խնդիրն. զոր ժողովը մեծագոյն մասամբ ընդունելով կ'ՈՐՈՇԷ Ազգ. Վարչութեան յղել փափազեան է ֆէնտի առաջարկն՝ ի գործողութիւն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական գործողութեանց կարգին մէջ կը մնայ միայն երեսփոխանաց ոմանց յարատեւ բացակայութեան խնդիրն, որ ինչպէս կը յիշէք անցեալ նստին մէջ յուզուած եւ Դիւանին յանձնարարուած է անոնց ցանկը պատրաստել եւ բերել: Այդ ցանկը պատրաստ է, եւ ահաւասիկ, սակայն ատենական գործողութեանց ժամը լրացաւ, ուստի, եթէ կը հաճիք, կանցնինք օրակարգին, եւ այդ խնդիրը կը թողունք ատենին փակման վերջին պահուն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովին գոյութեան, այսինքն կենաց եւ մահու խնդիրն է այդ, եւ կարգադրել պէտք է անողատճառ:

ՉԱՅՆԵՐ. — Օրակարգ, օրակարգ:

Ժողովը կ'ՈՐՈՇԷ օրակարգին անցնիլ եւ կը վերապահէ բացակայութեան խնդիրն նիստի վերջին պահուն:

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ



Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախընթաց նիստի որոշման համաձայն՝ այսօր ժողովը պիտի լսէ Տիգրանակերտի խնդրոյն վերաբերեալ թղթոց ընթերցումն ու Վարչութեան տալիք բացատրութիւններն. ուստի կը հրաւիրեմ զՏ Մատթէոս Եպիսկոպոսն խօսք առնուլ Վարչութեան թղթերը ներկայելու եւ պէտք եղած բացատրութիւնները տալու համար:

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Պատուաւ եմ խօսիլ. սակայն նախ սա կուզեմ գիտնալ թէ քանի որ այսօր Երաւաստութեան գիւանի տեղեկագիրը խնդրոյ ներքեւ ինկաւ անդամոց միոյն բողոքանաց պատճառաւ, պէտք է որ այս վիճակին մէջ խօսիմ յանուն Վարչութեան:

ԲԱՓԱՄԱՃՆԱՆ Մ. ԷՖ. — Շատ իրաւացի է Մատթէոս Արքայականի դիտողութիւնը: Երաւաստութեան դիւանի անդամներէն մին հրաժարեցաւ այսօր, տեղեկագիրն առանց իւր խորհրդակցութեան չլինուած ըլլալուն պատճառաւ եւ այսպէս տեղեկագիրն խնդրոյ ներքեւ ինկաւ: Այդ տեղեկագիրը պիտի լինէր ժողովին վիճարանութեան հիմն, եւ քանի որ այդ հիմն ինկաւ, չկրնար անշուշտ այս վիճակին մէջ խնդիրը յուզուիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կ'եղրակացնէք

յետաձգել խնդիրը, մինչև որ քննուի եւ պարզուի Երաւասութեան դիւանի անդամոց միոյն հրաժեշտին պատճառը, զոր մատոյց այսօր ժողովին, տեղեկագրին խմբագրութիւնն առանց իւր մասնակցութեան շինուած լինելուն պատճառաւ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Անշուշտ, եւ շատ բնական է այս առաջարկութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դիւանն այդ յետաձգութեամբ բնական եւ բանաւոր չգտնել, եւ ինչո՞ւ համար, ըսեմ զայն: Թողովը նախորդ նիստին մէջ որոշած էր Վարչութեան բացատրութիւնները լսել, ինչպէս լսել նաեւ սոյն խնդրոյն վերաբերեալ գրութեանց ընթերցումն: Եթէ Երաւասութեան դիւանի անդամներէն մին խնդիր յարոյց այսօր թէ տեղեկագրին յանգէտս իւր շինուած է, այս պատճառ մը չէ՞ որ Ազգային ժողովը չ'կարենայ Վարչութեան տպիք բացատրութիւններն լսել, եւ խնդրոյն վրայ պէտք եղած ծախսութիւնները քաղելով լուսաւորուիլ: Անշուշտ տեղեկագրին այն կէտն ալ ուշադրութեան նիւթ պիտի դառնայ, բայց ոչ այժմ, այլ երբ խնդիրն իւր որոշումն ընդունելու աստիճանին գայ յանգի, ուստի արդելք մը չկայ որ ժողովը չ'կարենայ լսել այսօր Վարչութեան յայտարարութիւններն եւ գրութեանց ընթերցումը:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Ստոյգ է թէ ժողովն անցեալ նիստին մէջ որոշեց Վարչութեան բացատրութիւններն լսել, սակայն կը յիշեն Երեսփոխան Էֆէնտիններն թէ ինչ հիման վրայ տեղի ունեցաւ այդ որոշումը: Երբ Երաւասութեան դիւանի տեղեկագրին եզրակացութիւնն որ Վարչութեան տնօրէնութիւնը կարդարացնէր, եւ առ ոչինչ կառավարիչը գրել փրկուպոս եպիսկոպոսի բողոքը, սկսաւ քննադատուիլ, այն տեսն յայտարարեցի որ եթէ անբաւական կը դատուի այդ եզրակացութիւնն, պէտք է Վարչութեան բացատրութիւնները լսել եւ խնդրոյն վերաբերեալ գրութիւններն տեսնել, ասոր վրայ

էր որ ժողովն որոշեց լսել Վարչութիւնն Ուրեմն այդ որոշումը նոյն իսկ Երաւասութեան դիւանի տեղեկագրէն կաճուոր իւր ծագումն եւ քանի որ այսօր այդ տեղեկագրին նոյն դիւանի անդամոց միոյն բողոքախառն հրաժեշտին պատճառաւ խնդրոյ ներքեւ լինկաւ, բնական է որ Վարչութիւնը լսելու մասին ժողովին տուած նախորդ որոշումն ալ այլայլի, ուստի պէտք է որ ժողովն այժմ որ որոշում մը տայ Վարչութիւնը լսելու համար, որպէս զի նա եւս կարենայ իւր բացատրութիւնները հաղորդել:

ԱԼՔՈՒՆ ՏԻՒՐԻ Ա. ԷՖ.— (Ատենապետ Երաւասութեան դիւանի) Թօսք կը խնդրեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Թօսք կ'ուզէք, կարծեմ, Երաւասութեան դիւանի տեղեկագրին նկատմամբ ծագած խնդրոյն վրայ խօսելու համար, որ ձեր անդամակիցներէն միոյն հրաժարագրին պատճառաւ երեւան եկաւ: Դուք բացակայ էիք նոյն պահուն եւ թերեւս կատարեալ տեղեկութիւն չունենաք: Ահա ասիկ եղելութիւնը: Ձեր անդամակիցներէն Օտեան Նշան Էֆէնտին հրաժեշտ կուտայ իւր պաշտօնէն, պատճառ ցոյց տալով թէ առանց իւր մասնակցութեան խմբագրուել է փրկուպոս եպիսկոպոսի խնդրոյն տեղեկագիրը: Կարգաւ Ձեզ իւր հրաժարագիրը:

Եւ Ատենապետ Էֆէնտին ընթերցաւ հըրաժարագիրը:

ԱԼՔՈՒՆ ՏԻՒՐԻ Ա. ԷՖ.— Իբրեւ Ատենապետ Երաւասութեան դիւանի հրաւեր կորդացինք մեր անդամակցաց՝ գումարուելու, եւ Տիգրանակերտի խնդրոյն վրայ Մատթէոս Սըրբազանի ներկայացնելիք բացատրութեանց տեղեկագրին եւ պաշտօնական գրութեանց ընթերցումն լսելու:

Այս հրաւերը նիստէն երկու օր առաջ գրուեցաւ, Ներսէս վարդապետ Ասլանեան կրցաւ ներկայ գտնուիլ, բայց դժբաղդաբար Օտեան Նշան Էֆէնտին ոչ, այն պատճառաւ, որ ինչպէս իրմէ լսեցինք ի վերջէ, հրաւեր

բաղիրն իւր ձեռքը ժամը 8½ ին հատեր է, մինչդեռ նիստն 5½ ին տեղի պիտի ունենար Մենք Ներսէս վարդապետի հետ միանալով՝ Մատթէոս Սըրբազանի ներկայացուցած գրութիւններն ուշի ուշով քննեցինք, պէտք եղած տեղեկութիւններն ստացանք. եւ համաձայնութեամբ տեղեկագիրը խմբագրեցինք. զոր ներկայեցինք ի վերջէ Նշան Էֆէնտին՝ ստորագրելու համար. սակայն նա զլացաւ իւր ստորագրութիւնն, առարկելով թէ ինք ներկայ գտնուած չէ նիստին, եւ իբր այն՝ չկրնար ընդունիլ այդ տեղեկագիրն: Իսկ եթէ անոր ներքեւ Ներսէս վարդապետի ստորագրութիւնը չէք տեսներ, պատճառն այն է որ նա անձամբ տկար եւ Պոյաճի-գիւղ գտնուելով՝ չէ կրցած ստորագրել, սակայն կատարելապէս համամիտ է եւ հաւան՝ տեղեկագրին պարունակութեանն: Արդ՝ Երաւասութեան դիւանն իւր տեղեկագիրը մեծադոյն մասամբ պատրաստած լինելով՝ եթէ Օտեան Նշան Էֆէնտին բողոք կը բառնայ անոր դէմ, իրաւունք ունի ինքն ալ ուրոյն տեղեկագիր մը պատրաստել եւ ներկայել ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Երաւասութեան դիւանի Ատենապետին բացատրութիւնները լրացեցինք, Դիւանն այնպէս կը կարծէ թէ պատահած իրողութիւնն արգելք մը չէ Վարչութիւնն այսօր լսելու:

ՂԱԶԱՐԱՅԵԱՆ Ք. ԷՖ.— Եթէ պահ մ'առաջ որոշեցինք Օտեան Նշան Էֆի հրաժարարագիրը Նախաքննութեան յղել, պատճառն այն էր որ Երաւասութեան դիւանի Ատենապետը ներկայ չէր նոյն պահուն, որ կարելի լինէր իրմէ բացատրութիւն ստանալ, եւ խընդիրը վերջացնել. բայց քանի որ այժմ ներկայ կը գտնուի եւ բացատրութիւն կուտայ, այլ եւս չեմ կարծեր որ հարկ լինի նախաքննութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Երաւասութեան դիւանի անդամոց մէջ խնդիր մը ծագած է. տեղամոյց երկուքն համաձայնած եւ տեղեկագիր մը մատուցած են, եւ երրորդն անմտն գըտ-

նուելով անանց խորհրդակցութենէն հրաժարականի ձեւով բողոք բարձած է. քանի իւր այս բողոքը մնայ Դիւանին վրայ, միշտ նախաքննութեան հարկ կայ, խնդրոյն ելք տալու համար:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Կրնանք Վարչութեան բացատրութիւնները լսել այսօր, սակայն չենք կարող տեղեկագիրը իբր հիմն ընդունիլ վիճարանութեան, վասն զի անդամոց մին կը բողոքէ, միւսին՝ այսինքն Ներսէս վարդապետի՝ ստորագրութիւնը կը պակսի, որ պէտք էր ստորագրած ըլլար զայն եւ իւր անձնական տկարութիւնն արդելք մը չէր կըրնար լինել այս մասին: Թէ եւ Երաւասութեան դիւանի Ատենապետ Էֆէնտին յայտարարեց թէ համամիտ է նա տեղեկագրին պարունակութեան, եւ մենք իւր վրայ վստահութիւն ունինք, սակայն այս վիճակին մէջ եկած տեղեկագիր մ'ընդունիլ օրէնքը չենք ընդունիլ. ուստի պէտք է զայն առ այժմ մեկուսի դնել, եւ միայն Վարչութեան բացատրութիւններն լրացնել:

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ.— Եւ տեսնե՞ք որ Երաւասութեան դիւանի անդամներէն Օտեան Նշան Էֆէնտին կը հրաժարի, բողոքելով որ առանց իւր խորհրդակցութեան շինուած է նոյն Դիւանի կողմէ մատուցեալ տեղեկագիրը: Բընական է որ Օտեան Էֆէնտին քանի որ մասնակից եղած չէ կատարուած ըննութեանց եւ խորհրդակցութեանց, չկարենայ համամիտ լինիլ պատրաստուած տեղեկագրին, սակայն կը ներքեւ անշուշտ ինձ ըսել որ բնական չէ իւր հրաժարեալը, զոր կը մատուցանէ այս առթիւ: Իսկ զայով Ներսէս վարդապետի ստորագրութեան խնդրոյն՝ քանի որ Երաւասութեան դիւանի Ատենապետը կը յայտարարէ թէ անոր խորհրդակցութեամբն եւ համաձայնութեամբը շինուած է տեղեկագիրը, եւ թէ Պոյաճը գիւղ գտնուելուն՝ պատճառաւ չէ կրցած ստորագրել, այլ եւս այս մասին երկըրայելու եւ խընդիր յաւելու տեղի չկայ:

Հետեւեալէս կը մնայ մէջ տեղ միայն Նշան Էֆի հրաժարականը: Արդ՝ այս մասին Ե-

բաւասութեան զիւանի Ատենայեան տուած բացատրութենէն վերահասու եղանք որ Նշան էֆէնտիի այս խնդրոյն քննութենէն անմասն մնալը, կանխակալ զիտման մ'արդիւնք չէ, այլ հրաւիրագրին անժամանակ ժամանումէն հետեւած է, ուստի լաւագոյն է վերադարձնել նոյն տեղեկագիրն առ Իրաւասութեան զիւանն, որպէս զի խորհրդակցի Օտեան Նշան էֆէնտիի հետ եւ այնպէս ներկայացնէ զայն:

Այս երկրորդ խորհրդակցութեան միջոցին թերեւս Նշան էֆէնտիի այնպիսի կարծիք մը յայտնէ որ իւր անդամակիցներն յարին անոր, թերեւս ինք անոնց համակարծիք գրանուի եւ ստորագրէ տեղեկագրին, եւ կամ չը կարենան համաձայնիլ եւ երկրորդ տեղեկագիր մ'ալ Նշան էֆէնտիի կողմէ ներկայանայ, որ մեր ուշադրութիւնն եւ կարծիք ալ յինքն յանկուցանէ: Յակայն ժողովն երբ մէկ կողմէ տեղեկագրին յետաձգումն որոշէ, միւս կողմէ պէտք է նաեւ մերժէ Օտեան Նշան էֆէնտիի հրաժարականն, որոյ ազգասիրութեանն յուսալի է որ ընդունելով ժողովին որոշումը՝ չպնդէ այլ եւս իւր հրաժարականին վերայ: Հետեւապէս լաւագոյն է այս վիճակին մէջ խնդիրը յառաջիկայ նիստին վերապահել, մանաւանդ որ ժամանակ ալ չկայ Վարչութեան բացատրութիւններն եւ գրութեանց ընթերցումը լսելու այսօր, որ բազմաթիւ են, եւ Իրաւասութեան զիւանի տեղեկագրին գալէն ետեւ՝ նկատողութեան ասնուլ խնդիրը:

ԶԱՅՆԵՐ. — Թող տպուին Վարչութեան ներկայացնելիք գրերն:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Այդ կէտը բոլորովին Վարչութեան կամաց պէտք է թողուլ:

Տ. ՄԱՏԹԷԼԻՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Դարձեալ կը պարտաւորիմ կրկնելու թէ Վարչութիւնն իւր բացատրութիւնները տալու համար՝ ժողովին մէկ նոր որոշման կը կարտի, քանի որ Իրաւասութեան զիւանին տեղեկագրին գոյութիւնն քայքայուն վիճակի մը մէջ կը զբտնուի:

Իրաւասութեան զիւանը Վարչութենէն բացատրութիւն եւ խնդրոյն վերաբերեալ պաշտօնական թղթերն ուղեց, զորս մատուցի իւրեն, եւ երբ անցեալ նիստին մէջ անոր տեղեկագրին եզրակացութեան վրայ վիճարանութիւն կը լլար, եւ դատական Յանձնախումբ մը գնելու առաջարկութիւն մը երեւան կուգար, Վարչութիւնը խղեց իւր խորհրդաւոր լուծութիւնը, ինչպէս կանուանէ մեր պաշտօնակիցներէն մին, եւ պնդեց որ իւր բացատրութիւնները լսուին, իւր ձեռքը գտնուած պաշտօնական գրերը կարդացուին, որով վրայ ժողովն ունկնդրութիւն որոշեց, միշտ վիճարանութեան հիմ բռնելով Իրաւասութեան զիւանի տեղեկագրին:

Այժմ այդ տեղեկագիրը ըզոքը ներքեւ կ'ընայ եւ յետս վերադարձնել կառավարի, թերեւս Օտեան Նշան էֆէնտիի տարբեր կարծիք կունենայ, եւ իւր անդամակիցները կը յարին իրեն, որով տեղեկագրին եզրակացութիւնը բնապէս փոփոխութիւն կը կրէ, եւ խնդիրն կել պարանափոխ կը լինի, ուստի ինչպէս կարելի է, նախորդ որոշման վրայ յենլով՝ Վարչութեան բացատրութիւնները լրեսել, քանի որ խնդրոյն վիճարանութեան հիմն եղող տեղեկագրին այս կերպով այլալուծեան ենթակայ վիճակ մը կտանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քիչ մ'առաջ յանուն Ղիւանի ըսի թէ տեղեկագրին նկատմամբ ծագած խնդիրն չէր արդելուր զժողովը Վարչութիւնը լսելէ. կրկնեցի նոյն խօսքն, երբ տեղեկագրին երկու անգամոց համաձայնութեամբ մտաուցուած լինին հաստատուեցաւ Իրաւասութեան զիւանի Ատենայեան յայտարարութեամբը: Թէ եւ Մատթէո սեպիակոպոս պէտք զգաց որ ժողովն իւր որոշումը կրկին անգամ հաստատէ, քանի որ Իրաւասութեան զիւանի տեղեկագրոյն վրայ խնդիր յարուցուած էր. սակայն այդ իրողութենէն յետոյ Երեսփոխաններէն ոչ ոք պնդեց որ Վարչութիւնը չլսուի: Տեղեկագրին նկատմամբ երեւան եկած դիտողութիւններն աւելի խնդրոյն այն կէտին կը վերաբերէին, որ իւր որոշումն առնու հասած պահուն երեւան պիտի գար: Իսկ արդ Եու-

սուֆեան էֆէնտի առաջարկութիւն մը կընէ, որ է Օտեան Նշան էֆէնտիի հրաժարագիրը մերժել եւ Իրաւասութեան զիւանի տեղեկագիրը ի կրկին նկատառութիւն վերադարձնել, այս կէտը ժողովին ուշադրութեան կը ներկայացնեմ, իւր կամքը հարցնելու համար:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Մի գուցէ իմ նրապատակա աղէկ հասկցուած չըլլայ. իմ կարծիքըս այն չէր ընաւ թէ Վարչութիւնը պէտք չէ լսել: Իրաւասութեան զիւանի Ատենայեանին յայտարարութենէն իմացանք որ անդամոց մին ներկայ չէ գտնուեր եղած խորհրդակցութեանց, որով համար կը հրաժարի իր պաշտօնէն, ուստի առաջարկեցի որ մերժուելով անոր հրաժարականը՝ տեղեկագրին յետս դառնայ Իրաւասութեան զիւանին, որպէս զի խորհրդակցելով հրաժարական մատուցանող էֆէնտիին հետ՝ այնպէս բերեն տեղեկագրին: Վասքն զի թէ խորհրդակցութեան նոր համադում մը գոյացնեն եւ տեղեկագրին փոփոխութեամբ ներկայացնեն, կարծեմ ոչ ոք իրաւունք կունենայ դիտողութիւն ընելու անոր դէմ:

Արդ՝ իմ առաջարկութիւնս է Օտեան Նշան էֆէնտիի հրաժարականը մերժելով յետս դարձնել Իրաւասութեան զիւանի տեղեկագրին, Նշան էֆէնտիի հետ խորհրդակցելու եւ ապա տեղեկագիրը ժողովիս ներկայելու համար:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եուսուֆեան էֆէնտիի առաջարկն երկու տարբեր մասերէ կը բաղկանայ, որոց առաջինն է Օտեան Նշան էֆէնտիի հրաժարականը մերժել, որ արդէն որոշում մ'ստացաւ այսօր եւ նախաքննութեան յղուեցաւ: Եթէ Նշան էֆէնտի խնդրոյն ներկայ դարձուածոց առջեւ հաճէր ինքնին յետս կոչել իւր հրաժարականն, կանոնական շիթութենէ մ'ազատած կը լլար զմեզ, որոյ մէջ պիտի գտնուիմք, հրաժարականի խնդրոյն վերադառնալով այն մասին նոր որոշում մը տալու համար: Դիւանն ի սրտէ շնորհակալ պիտի ըլլայ եթէ Նշան էֆէնտի այս դիւրութիւնն ընծայէ իրեն:

Կը մնայ այն ատեն Եուսուֆեան էֆէնտիի առաջարկութեան երկրորդ մասն, այն է Իրաւասութեան զիւանի տեղեկագրոյն առ նոյն Դիւան վերադարձն, որոյ համար ժողովին որոշման կը զիմեմ յայնժամ:

ՕՏԵԱՆ ՆՇԱՆ ԷՖ. — Եթէ Դիւանը կառավարիէ եւ ժողովն կը հաւանի, ես չեմ մերժեր, բայց կը փախաքիմ որ տեղեկագրին առ Իրաւասութեան զիւան վերադարձն ալ որոշուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը շնորհակալութիւն կը յայտնէ Օտեան Նշան էֆէնտիի, որ հաճեցաւ յետս կոչել իւր հրաժարականը: Այժմ ժողովին կամքը պիտի խնդրեմ Իրաւասութեան զիւանին տեղեկագրին առ ինքն վերադարձնելու մասին:

Եւ հետեւապէս Ատենայեան էֆէնտին քուէի կը գնէ խնդիրն, եւ ժողովն ըստ առաջարկութեան Եուսուֆեան էֆէնտիի կՈՐՈՇԷ միաձայն՝ Իրաւասութեան զիւանի կողմէ մատուցեալ տեղեկագրին վերադարձնել առ նոյն զիւանն, Օտեան Նշան էֆէնտիի հետ խորհրդակցելու եւ այնպէս իւր տեղեկագրին ժողովին բերելու համար:

Խնդիր բացակայութեան Երեսփոխանաց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս ասկէ առաջ յայտարարեցի, նախորդ նիստին մէջ ժողովն ուշադրութեան առնլով Երեսփոխանաց ոմանց յարատեւ եւ յաջորդական բացակայութիւնն, յանձնարարած էր Դիւանիս բացակայից ցանկը պատրաստել եւ բերել այս նիստին, որպէս զի դարձանն անորինէ այս մասին: Ահաւասիկ այժմ Դիւանը պահանջուած ցուցակը կը ներկայէ ժողովիդ:

- 1. Տ. Ներոէս վարդապետ Առանհան Բ 4
2. Տ. Նրթմանէս Քահանայ Պաշեան Բ 4

- 3. Թաշիկ էֆէնտի Մանկասարեան Բ 12
- 4. Սահակ էֆէնտի Ասրո Բ 5
- 5. Սենեքերիմ էֆէնտի Մանուկեան Բ 12
- 6. Ատովմ էֆէնտի Տէրոյէնց Բ 5
- 7. Սեպուհ էֆէնտի Մարտուտեան Բ 8
- 8. Սերվիլէն Բ 6
- 9. Տօքթօր Ռաֆայէլեան էֆէնտի Բ 5
- 10. Աւետիս էֆէնտի Քօլօյեան Բ 7
- 11. Ստեփան էֆէնտի Պէլլիկճեան Բ 4
- 12. Կարապետ էֆէնտի Շահպաղեան Բ 9
- 13. Մկրտիչ էֆէնտի Մուրատեան Բ 8
- 14. Պօղոս էֆէնտի Մկրտիչեան Բ 4
- 15. Եղիազար էֆէնտի Մէլլիքեան Բ 11
- 16. Սարգիս էֆէնտի Արթուրեան Բ 10
- 17. Տ. Միհրան էֆէնտի Արծրունի Բ 7
- 18. Աթանազիոս էֆէնտի Արապեան Բ 11
- 19. Սիմօն պէյ Մադուտեան Բ 6
- 20. Տիգրան էֆէնտի Տ. Ներսէսեան Բ 9
- 21. Մելքոն էֆէնտի Իսկէնտիբեան Բ 11

ՔԱՐԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ստուգիւ ցաւաւ լի է յոյժ որ մեր մէջէն շատեր Ազգին կողմէ վստահութեան մեծ պաշտօնի մը կը կոչուին, կըստանձնեն եւ սակայն չեն փութար դայն վարել ըսա արժանւոյն, բացակայ մնալով ստէպ ժողովոյ նիստերէն, որով պատճառ կըլան Ազգային գործոց ետ մնալուն: Խօսքս աւսոնց համար չէ որ բացակայութեան անհրաժեշտ հարկի մը ներքեւ կը դանուին, բայց կան այնպիսիներ որ առանց որ եւ է քանաւոր պատճառ ունենալու՝ նիստերուն ներկայ չեն գտնուիր, ըսել է որ կամ կարեւորութիւն չեն ընծայեր ազգին հանրական գործոց որոց վրայ այս ժողովը կը հսկէ: Եւ կամ չըսեմ աւելի ծանր խօսք մը, իրենց անձնական հանգիստը դեր ի վերոյ կը դասեն քան օգուտըն ազգին: Շատ աղէկ է ուրեմն որ այս կարգէն եղողներու անուններն ջնջուին երեսփոխանաց ցանկէն:

ԲԱԶՄԱԹԻՒ ՆՍՍԱՐԱՆՆԵՐԷ: — Այո՛, Այո՛:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Մենք ներքին կանոնադիր մ'ունինք, որ կը արամադրէ յաջորդարար երեք անգամ բա-

ցակայ գտնուող երեսփոխանը հրաժարեալ համարել. կանոնին այս արամադրութիւնը մերթ կը դորձադրենք, եւ մերթ ՚ի բայց կը թօշոնք, ինչպէս ըրած ենք ժամանակէ մը ՚ի վեր, այն աստիճան ընդարձակ թոյլտուութեամբ որ բացակայութիւններն այլ եւս իբր իրաւունք մը կը դասնան, եւ կը յաճախեն, այնպէս որ այս իրճակին կը համարի գործը Երբ այս ժողովը օրինաց անթերի գործադրութեան նախանձախնդիր հանդիտանայ, իբր օրինակը զամէնքը կը պարտաւորէ պատկառ կարգ օրինաց, եւ զգուշանալու զեղծութիւն:

Արդ քանի որ մինչեւ հիմա այս բացակայից նկատմամբ չ'է գործադրուեր օրինաց տըրամադրութիւնն, եւ անոնք բացակայ մնալով հանդերձ իրենց երեսփոխանական պաշտօնն կրցեր են պահել, կ'ատջարկեմ վերջին ազդարարութիւն մ'ուղղել անոնց, եւ հրաւիրել իրենց պաշտօնն վարելու, եւ այնուհետեւ կէտ առ կէտ գործադրել բացակայից նկատմամբ՝ կանոնին արամադրութիւնն, առանց որ եւ է թոյլտուութեան:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կ'ընդունիմ Քափամաճեան էֆէնտի տառաջարկութիւնն բացի այն կէտէն որ կը պահանջէ վերջին ազդարարութիւն մ'ուղղելով բացակայ երեսփոխանաց գործադրել օրէնքն: Այսքան շարունակ բացակայութիւններէ ետեւ՝ այլ եւս ազդարարութեան հարկ մնացած չէ: Բայց ի՞նչ պէտք է ընել այն դաս մը բացակայից, որ հիւանդ ձեւանալով չ'են ներկայանար ժողովին: Քանիներ տեսեր եմ ես անոնցմէ որք քաջատուջ շուկային մէջ կը շրջին այն օրն, յորում իբր հիւանդ ժողովին չ'են ներկայացեր, ի՞նչ անխղճութիւն է որ ազգն այսպէս կը խաբեն, ո՞վ արդեօք զիրենք բռնի բերեր պաշտօնի գլուխն անցուցեր է. իրենց յանձնառութիւնն ստանալով պաշտօն տուեր են, եւ սակայն 15 օրն անգամ մը քանի մը ժամ ազգին դահել չ'են ուղեր: Եթէ ասոր տուելը չ'առնուի, գիտցած ըլլաք որ այս ժողովը կը վերձանայ, ճշդութիւն պէտք է, ամեն երեսփոխան որ յանձն առած է պաշտօնը, չէ թէ այսպէս բացակայ մնալու է բազմաթիւ նիս-

տերով, այլ որոշեալ ժամուն ներկայ գտնուելու է նիստին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն երեսփոխանանց ընթացքը քննադատել չէ, այլ յաջորդական բազմաթիւ բացակայութիւն ունեցող երեսփոխաններ կան, ի՞նչ պէտք է ընել ստանց նկատմամբ, այդ կէտին վրայ խօսելու չնորճ ըրէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ըսի արդէն թէ այս մասին Քափամաճեան էֆէնտի տառաջարկութեան համամիտ եմ, բարեփոխութեամբ մը:

ԵՆՄԷՆԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Համաձայնելով Քրիստոստօր էֆէնտի, սա եւս կը յարեմ որ ոչ միայն պէտք է բացականերն հրաժարեալ համարել ու անցնել, այլ միանգամայն պարտազանց հրատարակել ազգին առջեւ լրագրաց միջոցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստոյգ է որ շարունակեալ բացակայութիւնք երեսփոխանաց ումանց մինչեւ 11—12 հասած են եւ ցաւալի է որ բացակայ երեսփոխանք ժողովին գործոց կարգադրութեան արդեւք կը լինին, որով շարունակաբար իրենց պարտաւորութիւնը կատարող երեսփոխանք ի զուր եւ ընդունայն ժողովին նստերուն կը ներկայանան Սակայն կանոնին արամադրած խստութիւնը նկատելով արժան է որ ք'չ 'ը չափաւորութեամբ եւ խոհակամութեամբ վարուինք, այսինքն, ինչպէս ուրիշ անգամ պատահած է զոր ես քաջ կը յիշեմ, վերջին ազդարարազիր մ'ուղղենք բացակայ երեսփոխանաց, կանոնին արամադրութիւնը յիշեցնելով իրենց, որ որոշեալ անգամէն աւելի բացակայ գտնուող երեսփոխանները իբր պարտազանց յազգային լրագիրս հրապարակագոյժ ընել կը պահանջէ: Միւս կողմանէ կարծեմք բանաւոր կը լինի: Մայր զիւանի այս մասին ըրած մէկ տառաջարկութիւնն ալ նկատողութեան առնուլ որ 57 անոյժ խնդրոց տեղեկագրին մէջ կը տեսնուի եւ

զոր վերջնապէս որոշելու համար պատեն առիթը կը ներկայանայ այսօր. ասով միանգամ ընդ միշտ կարգադրած կը լինինք երկարատեւ բացակայութեանց խնդիրը եւ ազգայ զժուարութեանց առաջն առնելու համար որոշ արամադրութիւն մ'ունեցած կըլլանք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ անգամ մը ուրիշ խնդրոյ մ'առթիւ դատաստան ընելու խօսք եղաւ այս ժողովին մէջ, գիտողութիւն ըրի թէ կարելի է արդեօք այս երկրին մէջ դատաստան ընել եւ արդարութեան բոլոր խստութիւնն ի գործ դնել Եսկ հիմա որ այս բացակայութեանց խնդրոյն մէջ օրէնքը իւր բոլոր խստութեամբն ի գործ դնել եւ բացակաները պարտազանց հրատարակելով հրաժարեալ համարել կառաջարկեն, միեւնոյն գիտողութիւնը կընեմ թէ պիտի կրնա՞նք արդեօք այսքան խստութիւն ի գործ դնել անոնց դէմ, թէ եւ պէտք է խստութեանը որ այդքան շարունակեալ բացակայութիւնք արժանի են օրինաց խստութեան: Երկրին ընդհանուր սովորութիւնն է որ զմեզ կը պարտաւորէ մեղմել կանոնաց խստապահանջ տրամադրութեանց գործադրութիւնը եւ թոյլտուութիւն ընել, ուստի մենք ալ չափաւորութեամբ շարժելու հարկադրեալ ենք: Այս բացակայութեանց իրենդիրն միշտ կայ մեր սեղանին վրայ, միշտ գանդատ կը լսուի իրենց պաշտօնը չ'կատարող երեսփոխանաց դէմ, որոց կը զոհուին միւսներն: սակայն ի՞նչ կրնանք ընել, եթէ ոչ հետադետէ մէկ մէկ դարման գտնել եւ աշխատի այս բացակայութեանց առաջքն առնելու:

Մայր զիւանն ինչպէս ըսաւ Ատենազըպ'ը էֆէնտին, այս մասին արդէն անաջարկութիւն մ'ունի 57 անոյժ խնդրոց վրայ իւր տուած տեղեկագրին մէջ, այս տառաջարկութեան ողին է պահել բացակայից համար կանոնին արամադրած պատիժը, որ է երեք անգամ յաջորդաբար բացակայ գտնուող երեսփոխանն իբր պարտազանց հրաժարեալ համարել. սակայն այս տնօրէնութիւնը չորրորդ բացակայութեանէն ետեւ գործադրել փոխանակ երրորդին գործադրելու: Այս տառաջարկու-

թեան համաձայն երբ երեսփոխան մը երեք անգամ բացակայ գտնուի, ազդարարութիւն կընդունի եւ երբ չորրորդին նորէն բացակայ չի, իւր անունը կը հաղորդուի ժողովին եւ հրաժարեալ կը հրատարակուի իրրեւ պարտազանց:

Ես կառավարկեմ ընդունիլ այս բարեփոխումն, որով լուծուած կըլլայ միանգամայն Մայր դիւանին տեղեկագրած անլոյծ խնդիրներէն մին, ինչպէս այսպիսի առթիւ մը լուծուեցաւ նաեւ Ղալաթիոյ թաղեցւոց ընտրական իրաւանց խնդիրն, որ նոյնպէս 57 անլոյծ խնդրոց մին է: Իսկ մինչեւ ցարդ բացակայ գտնուող Երեսփոխանաց պէտք է վերջին ազդարարութիւն մ'ուղղել որ եթէ չներկայանան յառաջիկայ նիստին իրրեւ պարտազանց հրաժարեալ պիտի համարուին, եւ այնուհետեւ գործադրել կանոնը:

Տ. ՄԱՏԹԻՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Օրինական դիտողութիւն մ'ունիմ: Երբ ասկէ առաջ ուրիշ անգամ մը այսպէս բացակայից ցանկ մը ներկայացաւ ժողովոյս, Ատենապետ փաշայի առաջարկութեան վրայ՝ վերջին ազդարարութիւն մ'ուղղուեցաւ բացակայից որ երբ նորէն չներկայանան ժողովին, իր պարտազանց հրաժարեալ պիտի հաշակուին. եւ այսպէս ալ գործադրուեցաւ: Գարձեալ մի եւ նոյն պարագային մէջն ենք, եւ նոյն է դանակին պէտք է հետեւինք:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ.— Հաստատեալ օրէնքը բարեփոխելու համար՝ Մայր դիւանին կողմէ եղած առաջարկ մը կը յիշատակեն, եւ զայն որչափ կուզեն: Ար եւ է կանոն հաստատութիւն գտնելու համար՝ երբեակ որչափ պիտի անցնի ըստ օրինի, եւ չեմ հասկնար ինչպէս այսքան ստիպողական եւ կենսական խնդրոյ մը մէջ, որ անմիջական լուծում կը պահանջէ, սիրող կանոնը գործադրելու կը գեղեկինք եւ նոր օրէնք մը սահմանելու կեննենք: Երեսփոխանք տասն եւ հինգ օրն անգամ մը ժողովի պիտի դան, եւ ինչ յողովութիւն պիտի կրին, որ չեն ուղեր

զալ, ազտա եւ խօսելու կամ ոչ, քուէ տալու համար՝ եթէ ուզեն, ձեռքերնին վեր կառնուն, թէ ոչ՝ ձեռնպահ կը նստին, ինչու չեն դար ուրեմն: Ես բոլորովին հակառակ եմ հաստատեալ կանոնին փոփոխութեանն եւ անոր գործադրութիւնը կը պահանջեմ: Մարդ չկուրենք ըսելով Ազգը պիտի կտարենք, այս երեսփոխանաց բացակայութիւնը ժողովը անգործութեան կը մատնէ եւ ազգին գործոց վնաս կուտայ:

ԱՏԵՆ ԱԳՊԻՐ ԷՖ.— Փոքրիկ բացատրութիւն մը տամ այս խնդրոյն վրայ ժողովին: Ներքին կանոնադիրը կը տրամադրէ որ երեք անգամ յաջորդաբար բացակայ գտնուող Երեսփոխանը հրաժարեալ համարուի: Արդան Պատրիարքը ընդ Երեսփոխանս ոմանս շատ խիստ գտնելով այս կանոնը, անոր բարեփոխումը առաջարկած էր ժողովին: Ժողովը սոյն խնդրոյն վրայ Նախաշննիչ դիւանին տեղեկագիր ուղեց, բայց չկրցաւ ստանալ: Մայր դիւանն ի վերջէ 57 անլոյծ խնդրոց կարգին մէջ գտնելով սոյն խնդիրն, զայն նկատողութեան առած, քննած եւ կանոնին այդ տրամադրութիւնն թէեւ արդար, բայց խիստ զրտնելով՝ առ բարեփոխումն առաջարկած էր որ Երեսփոխան մը փոխանակ երրորդ բացակայութեան, չորրորդին հրաժարեալ եւ պարտազանց համարուի: Իսկ զալով ժողովոյ ներկայացեալ բացակայ Երեսփոխանաց ցանկին, կը կրկնեմ գործեալ եւ կը պնդեմ թէ քանի որ այսքան երկտր բացակայութիւններէ ետեւ՝ Երեսփոխանական պաշտօնի վրայ կը մնան դեռ, վերջին ազդարարութիւն մ'ուղղել կարծեմ պատշաճ է եւ պարտք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Կը տեսնեմ որ ամենէն խառնապահանջը Քրիստոստուր էֆէն: Ես պիտի հաստատեմ որ ինքն ալ թոյլտուութեամբ վարուեր է ցարդ այս խնդրոյն մէջ, եւ ներող գտնուեր է:

Օրէնք մը սահմանուած է որ երեք նիստէ յաջորդաբար բացակայ գտնուող երեսփոխանը պարտազանց կը հրատարակէ: Երեսփոխաններ գտնուեր են տասն եւ մէկ նիստերէ

ի վեր բացակայ. բայց այս օրէնքը չէ գործադրուեր, անոնց բացակայութիւնը նշանակուած է առեւտրութեան մէջ, առկայն ոչ Քրիստոստուր էֆէնտին, եւ այլ ոչ ոք մեզմէ ելեր եւ օրինաց գործադրութիւնը պահանջեր է: Այսպէս օրէնքը խոտու գործադրութեան չէ դրուեր, եւ այս մասին ամեն կողմէ ներողամիտ թոյլտուութիւն մ'ի գործ դրուեր է աւելի:

ՉՍՅՆ ՄԸ. — (Ընդմիջելով) Այս թոյլտու ընթացքը կործանում կը բերէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Մի վախնաք, չը կործանիր այս ժողովը: Բացակայութեանց մասին ժողովն այսպիսի թոյլտու ընթացք մը բռնելով օրինաց մէջ բարեփոխում մը ներմուծելու հարկ մը զգացած կերեւի, եւ այս է պատճառ որ խոտութեամբ չէ ուզեր շարժիլ: Արդէն այս բացակայութեանց խնդիրն քանի քանի անգամ ժողովին մէջ յուզուած եւ արդէն 57 անլոյծ խնդրոց շարքին մէջ իւր լուծումն ընդունելու կըստ պատէ:

Եթէ Մայր դիւանի առաջարկած բարեփոխումն ընդունուի եւ կանոնն այնպէս գործադրութեան դրուի, մենք ալ կրնանք հսկել այս մասին, քուցակը մեր ձեռքն է, եւ երբ կը տեսնեմք որ երեսփոխան մը երեք անգամ բացակայ գտնուեր է, մենք կը յիշեցնենք Գիւանին որ ազդարարութիւն ուղղէ եւ կանոնին գործադրութեանը հետամուտ կը լինինք: Կը յուսամ որ կրնամք այս կերպով բացակայութեանց առաջը առնուլ:

ՔԱՓԱՄԱՏԵԱՆ Մ. ԷՖ.— Քրիստոստուր էֆէնտին ըմբռնումը սխալ է, վասն զի իւր ըրած դիտողութիւնն օրինական ծրագիրներու համար է, եւ ոչ կանոնադրական ծրագիրներու, որ պարզ փոփոխութեամբ կրնուի ին կամ կը մերժուին: Արքայան Պատրիարքը բացակայութեանց համար կանոնին սահմանած արամադրութիւնը խիստ գտնելով, բարեփոխում մ'առաջարկեց ասկէ առաջ, եւ ժողովը ալ սկզբուեցն ընդունելով նախաքննու-

թեան յղեց, սակայն չեկաւ ստատուած անդեկագիրն, եւ հետեւաբար Մայր դիւանն, ինչպէս ուրիշ անլոյծ խնդրոց վրայ, նոյնպէս այս մասին ալ առաջարկութիւն մը ներկայացուցեր է, զոր ժողովը պէտք է ընդունի: Եւ գործադրութեամբ փորձէ անոր արդիւնքը:

ՉԵՐԱԶ Ք. ԷՖ.— Այս առաջին անգամը չէ անշուշտ որ ժողովս բացակայութեանց խնդրով կ'ըրաղի. ամէն նիստերու մէջ առ հասարակ ուղղակի կամ անուղղակի յուզուած է այս խնդիրը: Ժողովս շատ միջոցներ խորհած է այս մասին, որոշումներ տուած եւ կանոններ դրած է. բայց դժբաղդաբար գործնական արդիւնք մը չեն արտադրած, եւ գուցէ չէին կրնար արտադրել, վասն զի բացակայից նկատմամբ ինչ խոտութիւններ ալ ի գործ դնենք, անոնց զլխաւորը պիտի ըլլայ զանոնք հրաժարեցնել: Արդ եթէ հրաժարեցնենք, թերեւս անոնք մեծ բան մը տուած չըլլան, ընդհակառակն ժողովս պիտի լինի վընասուողը, վասն զի այս եղանակաւ ստեպ ստեպ հրաժարականներու եւ քնտրութիւններու ձեւական խնդիրներով զբաղելու պիտի հարկադրի: Սա ալ պէտք չէ մոռնանք թէ ամէն անգամ որ Երեսփոխան մը հրաժարած է, ժողովս իրաւամբ ցաւ զգացած է, ընդհանրապէս չէ ընդունած հրաժարականը, մինչեւ իսկ քանի քանի անգամ յանձնարարած է Արքայան Պատրիարք Հօր կամ Մայր դիւանին որպէս զի ընտրեալն յորդորեն որ ետ առնուի իւր հրաժարականն եւ աջակցի մեզ: Ուստի չեմ կարծեր որ քիչ մ'առաջ Մայր դիւանին եւ Երեսփոխանաց ոմանց կողմէ եղած առաջարկութիւններն եթէ ընդունուին օգտակար արդիւնք մը յառաջ բերեն, մանաւանդ որ առաջարկուած միջոցներէն ոմանք, եթէ չեմ սխալիր, արդէն ընդունուած, փորձուած ու անյաջող եղած են: Արդ իմ կարծիքս այն է թէ քանի որ բացակայ Երեսփոխանք փոքր ինչ զոհողութիւն չեն կարող ընել կամ բաւական դիւրութիւն չունին ժողովոյն նիստերուն ներկայ գտնուելու, զէթ մենք մեր կողմէ դիւրութիւններ ընծայենք իրենց, ըստ

տանկակամ անաճին, որ կրտէ՛ ճերէ լեռը զԵ քալէ, ձգնաւորը պետք է քալէ:» Այս գիւրութիւնը մենէ պահանջելու իրաւունք ալ ունենան գուցէ, եթէ՛ Երեսփոխանաց զանազան վիճակներն աչքի առջեւ բերելով ուշադրութեամբ քննենք խնդիրը:

Ես կը մտածեմ որ ուրբաթ օրեր նիստ գումարելն Երեսփոխանաց ամէն դասին հաւասարապէս յարմար չէ, զոր օրինակ կառավարական պաշտօններու մէջ գանձողներուն ինչպէս նաեւ եկեղեցական գաստունէ՛ ամար օրէնքը նպատաւոր է, վասն զի անոնք առեւտրական գործեր չունենալով ուրբաթ օրերը զիւրութիւն ունին հոս գալու, մինչդեռ այդ զիւրութիւնէն զուրկ են վաճառականութեամբ կամ առեւտրով կամ ուրիշ պաշտօններով պարապողներն, որոնց արդարեւ այլ եւ այլ պատճառներով գծուարին կը լինի ուրբաթ օրերը ժողովի գալ, Աւստի կառաջարկեմ որ ամիսն անգամ մը նիստ մ'ալ ունենանք կիրակի օրն եւ ներքին կանոնագրին 15 օրն անգամ մը նիստ գումարելու տրամադրութեան վրայ աւելցնենք նաեւ սա բաւերն, եւ ամիսըն անգամ մը կիրակի օրն:

Այս բարեփոխութեամբ բացակայք այլ եւս ըսելիք մը չեն ունենար եւ ժողովս ալ բացակայութեանց նկատմամբ արդի տիրող օրէնքը կրնայ գործադրել ամենայն իրաւամբ, թէ՛ պէտ եւ ժողովս պարտաւոր էր այդ օրէնքըն ասկէ առաջ ալ գործադրել, քանի որ ընդունուած օրէնք մ'էր, եւ կը զարմանամ թէ ինչպէս ժողովոյս գիւանը թոյլ տուեր է որ Երեսփոխաններէն սմանք մինչեւ 12-13 անգամ շարունակ բացակայ գտնուին:

Ասկէ զատ ենթադրելով որ ամէն 15 օրըն անգամ մը նիստ ունենանք կանոնադրապէս, ըսել կըլլայ թէ տարին առ առաւելն 24 նիստ միայն պիտի կարենանք ունենալ, միթէ՛ այսքան նիստեր բա՛ւ են մեր ազգային բազմազան պէտքերը գոհացնելու: — Ոչ երբէք՝ Օրակարգին մէջ մինակ 37 անույժ խնդիրներ ունինք, եթէ ներկայ գրութեամբ շարունակենք, ո՞ր իտէ որչափ ժամանակէն պիտի յաջողինք լուծել այդ անույժ կոչուած խնդիրներն ինչպէս կը տեսնէք, առաջարկութիւնս

ստիողողական բնութիւն մ'ալ ունի, եւ ես թէ եւ չեմ պահանջեր որ ժողովս այսօր անմիջապէս վճիռ մը տայ այս մասին, բայց գոնէ կը խնդրեմ որ ձեռնհաս Գիւանն, որու յանձնուի թերեւս առաջարկին բնութիւնը, փութայ բերել իւր տեղեկագիրը յառաջիկայ նիստին:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. Է. Ֆ. — Թէ եւ բացակայութեանց խնդիրը մեծ կարեւորութիւն կը գտնէ, եւ բուն միջոցներ կառաջարկուին բացակայից զէ՛մ, սակայն ժողովը միշտ մեծագոյն մաս ունեցած է, ինչպէս որ անցեալ նիստին ալ յիսուն Երեսփոխան ներկայ զըտնուած են, ուստի կը սխալին անոնք որ կըսեն թէ Երեսփոխանաց ըմանց բացակայութիւնն ժողովին գործոց արդեւք եղած է: Ես կը բողոքեմ այսպիսի յայտարարութեան մը զէ՛մ, որ Երեսփոխանաց գործունէութիւնը կը հարուածէ:

Այս բացակայութեան խնդիրն զանազան կողմեր ունի, որ պէտք չէ ուշադրութենէ վրիպին:

Գիտէ՛ք արդէն որ Ազգ. ժողովն ասկէ առաջ Ղալաթիոյ մէջ կը գումարուէր, ուր հեշտ էր երթեւեկն, սակայն Սրբազան Պատրիարքն ուզեց որ Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունենան գումարումներն, երեսփոխաններէն շատեր այն ատեն այս տեղափոխութեան զէ՛մ զխողովութիւններ ըրին, եւ յայտարարեցին թէ չպիտի կրնան ներկայ գտնուիլ գումարմանց, սակայն ի վերջէ՛ ետ առին իրենց յայտարարութիւնն եւ զոհողութիւն ընելով սկսան գալ ժողովի Ստոյգ է որ որոշեալ ժամանակէն քիչ մը ուշ կուգան, բայց այս ալ չկրնար յանցանք վերագրուիլ իրենց այսպիսի պարագայի մը մէջ, մանաւանդ այս քաղքին մէջ, ուր հազորդակցութեանց զիւրութիւն չկայ: Յոյց տուէ՛ք ինձի ժողով մը որ այս քաղքին մէջ կարենայ որոշեալ ժամուն անվրէժ գումարիլ կարծեմ թէ չէ կարելի երեսփոխաններէն պահանջել որ անպատճառ այս ինչ ժամուն ներկայ գտնուին, եւ ուշ մնացող երեսփոխաններն իբրեւ դպրոցական աշակերտներ պատժել: Գրխառոտուր է՞ քէնտին ներ-

ըին կանոնագրին մէկ յօդուածին յենլով պատրիարքը կուզէ՛ տայ բացակայ երեսփոխանաց: այդ կանոնին բարեփոխումն առաջարկած է Սրբազան Պատրիարքն, եւ շատ իրաւամբ, նախ վասն զի խիստ է այդ կանոնն, երկրորդ՝ վասն զի երբ այդ կանոնագիրը ժողովը քուէարկեց, Սահմանադրութեան հակառակ կէտերը բարեփոխելու պայմանաւ քուէարկեց: Ստուգիւ այդ կանոնագրին տրամադրութիւնն բացակայութեանց մասին, այնքան կարօտ է բարեփոխման, որ ժողովն անգամ՝ զայն գործադրութեան դնելու զգուշացած է միշտ: Այդ կանոնը կը պահանջէ անպատճառ իբր պարտազանց հրաժարեալ համարել երեք յաջորդական նիստի ներկայ չգտնուող Երեսփոխանն, բայց միթէ չե՞ն կրնար պատահիլ այնպիսի դէպքեր որ Երեսփոխանն պարտաւորի բացակայ մնալու երեք անգամ ժողովէն: Օրինակի համար՝ Երեսփոխան մը թէ՛ եւ կանոնին ցոյց տուած պատճառներէն զուրս, սակայն ոչ նուազ անհրաժեշտ պատճառի մը սողեցութեան ներքեւ, երկու անգամ բացակայ մնացած է ժողովէն, յաջորդ անգամուն մտադիր է անպատճառ ժողովին ներկայ զըտնուիլ, սակայն կը պատահի որ յանկարծ հիւանդանայ, նամակ չ'կարենայ հասցնել եւ առանց ծանուցանելու՝ բացակայ մնայ նիստէն եւ ահա կանոնը կը պահանջէ որ այս երեսփոխանն իբր պարտազանց հրաժարի:

Չմոռնանք որ այնպիսի երկրի մը մէջ ենք որ եթէ մէկը նամակ մը գրէ եւ տեղական թղթատարին յանձնէ, հետեւեալ օրն կամ կը հասնի կամ ոչ իւր նպատակին: Ես այդ յարատեւ բացակայութիւններն ի չքմեղս չեմ համեր, մանաւանդ եթէ կան անոնց մէջ որ ճանտապարհօրդ են պէտք է անպատճառ հրաժարին, բայց հարկ կը համարիմ որ ժողովըն աւելի բանաւոր միջոցներ ի գործ դնէ անոնց առաջըն առնելու եւ անտես չառնէ այն դժուարութիւններն, որոց ենթակայ ենք: Կրնան զանազան միջոցներ ձեռք առնուիլ, օրինակի համար, եթէ ժողովը հիմա ժամը 6ին հրաւէր կընդունի գումարման եւ 8 ին հազիւ ատեանը բացուելով 10 ին կը վերջանայ, կըրնայ փոխուիլ գումարման ժամանակն եւ 4ին

բացուելով նիստը՝ 8 ին վերջանալ, թերեւս այս ժամանակի փոփոխութիւնը՝ զիւրութիւն մ'ընծայէ: Կրնայ բացակայ երեսփոխանաց անուններն զիրենք ընտրող թաղերուն ծանուցուիլ, որպէս զի հարկադրեն զանոնք կատարելու իրենց պարտաւորութիւնը: Կրնայ վերջապէս թէ՛ Սրբազան Պատրիարք չօր եւ թէ՛ Գիւանին կողմէ՛ ազդարարութիւններ ուղղուիլ, ինչպէս եղած է ցարդ որ նիստերուն ներկայ գտնուին, վերջապէս իմ կարծիքս այն է որ մեղմ, բայց աւելի բանաւոր՝ եւ գործնական միջոցներ ի գործ դրուին քան այնպիսի քառութիւններ, որ մեծ արդիւնք մը յառաջ չեն բերեր:

Օրը տարածամած լինելով սոյն խնդրոյն վիճարանութեան շարունակութիւնն յառաջիկայ նիստին կը մնայ՝ չեւ ատեանը կը փակուի ժամ 10: ին յառաջիկայ նիստը մէկ ամիսէն գումարելու որոշմամբ:

Ատեճաղպիր Ատեճապետ  
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ 8. ՄԷԻՆԷՄ-ԳՈՒԼԻ

S

### ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

#### ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- |    |              |            |              |             |
|----|--------------|------------|--------------|-------------|
| 1  | Տ. Մկրտիչ    | Ս. Արքեպս. | Խրիսեան      | Ա. Արեւադէր |
| 2  | Տ. Խորէն     | Ս. »       | Նար-պէ       |             |
| 3  | Տ. Կարապետ   | Ս. Եպս.    | Սերոյիբեան   |             |
| 4  | Տ. Մատթէոս   | Ս. »       | Իզմիրլեան    | Բ. Արեւադէր |
| 5  | Տ. Ամբրոսիոս | Մ. Վրդ.    | Աուրինեան    |             |
| 6  | Տ. Գարեգին   | Մ. »       | Թաթարեան     |             |
| 7  | Տ. Ներսէս    | Մ. »       | Ասլանեան     |             |
| 8  | Տ. Պ օղոս    | Մ. »       | Խօլտամեան    |             |
| 9  | Տ. Արիստակէս | Աւագ Գհն.  | Մամբրեան     |             |
| 10 | Տ. Խորէն     | »          | ՓէՆյիվանեան  | Բ. Արեւադէր |
| 1  | 1Տ. Սահակ    | »          | Տ. Սարգիսեան | Ա. Արեւադէր |

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- |    |               |               |              |             |
|----|---------------|---------------|--------------|-------------|
| 1  | Առաքել էֆէնտի | Ալթուն Տիւրբի | Ա. Արեւադէր  |             |
| 2  | Գէորգ         | »             | Գլըլըճեան    |             |
| 3  | Գարրիէլ       | »             | Եսաեան       |             |
| 4  | Լօղօֆէթ       | »             | Պալեօղեան    |             |
| 5  | Մարտիրոս      | »             | Միւհէնտիսեան |             |
| 6  | Մկրտիչ        | »             | Յրէնկեան     |             |
| 7  | Յակոբ         | »             | Զօպանեան     |             |
| 8  | Սահակ         | »             | Ղաղարոսեան   |             |
| 9  | Ստեփան        | »             | Պէլիկեան     | Բ. Արեւադէր |
| 10 | Խաչատուր Խան  | »             | Տ. Ներսիսեան |             |

**ՉԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

**ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ**

1. Վաւերացումն թե՛ եւ թ՛ջ նիւտերու տոննագրութեանց
2. Բացակայութիւն Երեսօխանաց
3. Հրաժարական
4. Երեսօխանական նորոգ ընտրութիւնք
5. Պատասխանի հարցման Երեսօխան Մ. Քափամաճեան էֆէնտիի
6. Խարրերդի պաշտօնանկ առաջնորդ Բաղրատունի կարապետ վարդապետի աղերսագիրն
7. Երեսօխան Ս. Փափաղեան էֆէնտիի առաջարկը :

**ՕՐԱԿԱՐԴ**

- Ա. Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի :

Ինչիր բացակայութեան Երեսօխանաց :

**Գիւն 2 դրոշ**

**ՅԵՓԷՍԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ**

**ԱԶԳՍՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԱՌՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ**

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի եւ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ բանկայի եւ Հայ գրավաճառաց քով